

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հայաստանի Առջեւ Ծառացած Նոր Մարտահրավերները

Մայիս 4-էն սկսեալ Հայաստանի տարածքին հանուեցան ազատ տեղաշարժի սահմանափակումները, որոնք հաստատուած էին պայքարելու համար «Քորոնա» ժահրի տարածման դէմ: Որոշ բացառութիւններով, արտօնութիւն տրուեցաւ վաճառատուներուն, ճաշարաններուն եւ այլ աշխատատեղերուն՝ բանալու իրենց դռները: Հանրային փոխադրամիջոցներու տակաւին չեն աշխատիր, նկատի առնելով, որ այնտեղ դժուար է մարդոց միջեւ հեռաւորութիւն պահելու կանոններուն հետեւիլը: Ինչ կը վերաբերի դպրոցներուն ու կրթական հաստատութիւններուն, նախապէս արդէն յայտարարուած էր, որ այս տարուայ համար անոնք բոլորը փակուած են:

Աստիճանաբար «Բնականոն կեանքի» վերադառնալու ուղղուած այս քայլերը կ'առնուին հակառակ անոր որ, վերջին օրերուն վարակուածներու թիւի զգալի աճ կ'արձանագրուի, ինչ որ կը մղէ առողջապահութեան նախարար Արսէն Թորոսեանին մտահոգութիւն յայտարարելու, որ մինչեւ Մայիսի վերջը 10 հազար հոգի կրնայ վարակուիլ ժահրի հիւանդութեամբ՝ առաւել եւս ծանրաբեռնելով առողջապահական համակարգը: Վերջին օրերուն մշտադաւանող թիւերու այս աճը պայմանաւորուած է մի քանի ազդակներով: Առաջինը այն է որ, վերջին շրջանին քննութիւններու թիւը աւելցած է եւ օրական հազար եւ անէլի քննութիւններ կը կատարուի: Որքան բարձրանայ քննութիւններու թիւը, այնքան աւելի վարակակիրներ ի յայտ կու գան: Երկրորդ պատճառը այն է որ, երկու շաբաթ առաջ արտօնութեան շինարարութեան ոլորտի եւ արտադրամասերու գործունէութիւնը, որմէ ետք թիւերը սկսան բարձրանալ: Վարակակիրներու թիւի աճին կը նպաստեն նաեւ քաղաքացիներու կողմէն ընկերային հեռաւորութիւն չպահպանելու եւ դիմակներ չօգտագործելու երեւոյթները:

Երկիրը բանալու կառավարութեան այս որոշումները կ'արժանանայ քննադատութեան, երկու իրարամերձ առարկութիւններով: Ոմանց կարծիքով սահմանափակումները դրուած էին այն ժամանակ երբ օրական 20-40 նոր վարակակիր կը յայտնաբերուէր, իսկ այժմ այդ թիւերը հասած են օրական 150 եւ անէլի ու որոշում կը կայացուի բանալու տնտեսութիւնը: Միւս կողմէ սակայն, կառավարութիւնը եւ ժողովուրդը ունեցան մէկ ամիս ժամանակաշրջան, պատրաստուելու հիւանդութեան յաջորդ ալիքներուն եւ ձեւեր գտնելու՝ ապրելու վարակին հետ: Կը հնչեն քննադատութիւններ, որ արտակարգ դրութիւն հաստատելով ու երկիրը

Հայաստանի Մէջ Չկայ Որեւէ Մաֆիոզ Ուժ, Որ Ի Վիճակի Է Խաթարելու Մեր Երկրի Կայունութիւնը. Փաշինեան



Հայաստանի խորհրդարանի նախագահութիւնը, ուր ոչ բոլորը կը պահեն առողջապահութեան կանոնները

Հայաստանի Հանրապետութեան մէջ, 2018-ի Մայիսին ի վեր հաստատուած է ժողովրդավարական կայունութիւն: «Արմէնիոն»-ի փոխանցումով՝ այս մասին Ազգային ժողովէն ներս կառավարութեան ծրագրի կատարման ընթացքին եւ արդիւնքներու մասին տարեկան գեկոյցի քննարկումի ժամանակ ըսած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Հայաստանի Հանրապետութիւնը կայուն ժողովրդավարական պետութիւն է: Գիտէք, Հայաստանի Հանրապետութիւնում շատ երկար տարիներ հաստատուած է եղել

մենատիրական կայունութիւն: Եւ մենատիրական կայունութեան ֆոնին ժողովրդավարական կայունութիւնը երբեմն կարող է թողնել անկայունութեան տպաւորութիւն: Բայց ես ուզում եմ արձանագրել, որ Հայաստանի Հանրապետութիւնում հաստատուած է ժողովրդավարական կայունութիւն, հաստատուած է ժողովրդական եւ ժողովրդավարական իշխանութիւն, եւ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդավարական կայունութեանը ոչինչ չի սպառնում: Պատիւ

«Վերջին Երկու Տարիներուն Հայաստանը Ժողովրդավարացման Առումով Լուրջ Յառաջընթաց Արձանագրած Է». Զեկոյց

«Լուրջ յառաջընթաց նախեւառաջ քորոնավիրուսի դէմ պայքարի եւ ընտրութիւններու ոլորտներէն ներս». - այսպէս կը գնահատեն արեւմտեան ամենահեղինակաւոր իրաւապաշտպան կառույցներէն մէկուն՝ Ուաշինկթոնի Freedom House-ի փորձագէտները Հայաստանի իշխանութիւններու յետ յեղափոխական ձեռքբերումները, Մայիս 6-ին հրապարակուած ամենամեայ գեկոյցին մէջ, որ նուիրուած է անցումային շրջանի մէջ գտնուող արեւելաեւրոպական եւ յետխորհրդային 29 երկիրներու մէջ տիրող կացութեան:

Ըստ Զեկոյցի հեղինակներուն՝ Հայաստանը, 2018-էն 2020 թուականներուն դիտարկուող երեք տասնեակ պետութիւններու մէջ, ժողովրդավարացման ընթացքի առումով ամենամեծ յառաջընթացը արձանագրած է:

«Այս տարի, Հայաստանը գեկոյցի հրապարակման պատճառով ընթացքին ամենաբարձր ցուցանիշը գրանցած է», - կը նշեն



Freedom House-ի փորձագէտները՝ աւելցնելով, սակայն, որ երկրին մէջ դեռ մտահոգիչ հիմնախնդիրներ եւս առկայ են, ակնարկելով դատական ոլորտի շուրջ ծաւալուող զարգացումներուն:

Ըստ գեկոյցին, այսօր յետխորհրդային տարածքին մէջ, երկու պետութիւն կայ, ուր անցումը կառավարման ժողովրդավարական համակարգին գրեթէ նոյնատիպ խնդիրներու հետ բախում ունի, Հայաստանը եւ Ուքրաինան:

«Հայաստանի վարչապետ Նի-

Արսէն Թորոսեան Չի Բացառեր, որ Մայիսի Վերջաւորութեան Վարակակիրներու Թիւը Հասնի 10 Հազարի

Հայաստան մէջ վերջին օրերուն օրական աւելի 100 անձ կը վարակուի «Քորոնա» ժահրով: Առողջապահութեան նախարար Արսէն Թորոսեան կը յայտնէ որ, վարակի օճախները բազմաթիւ են, ինչ որ կը նշանակէ, որ բոլորը պէտք է խստօրէն պահպանեն կանոնները:

Նախարարը ընդգծեց, որ մինչեւ Մայիսի վերջաւորութեան, հնարաւոր է ունենանք 10 հազար վարակակիր, իսկ եթէ կանոնները չպահպանուին, ապա թիւերը աւելի կ'աճին. - «Տարբեր աղբիւրներ կան: Հիմա կարող եմ մօտաւորապէս ասել. 34-ը դրանք մեկուսացումից քաղաքացիներ են, 58-ը հաստատուած դէպքի հետ շփումներ են, բժշկական աշխատակիցներ ունենք էլի, յայտնի յուղարկաւորութեան արարողութեան մասնակիցներ եւ մի քանի գործող տնտեսավարող հաստատութիւնների աշխատակիցներ»:

«Ազատութիւնը» հարց ուղղեց նախարարին - «Դուք գոնէ առաջին հայեացքից բաւական սարսափելի զգուշացում արեցիք, որ եթէ կանոնները չպահպանուեն, ապա կարող ենք ունենալ մինչեւ 500 հազար հիւանդներ, հազարաւոր մահեր: Եւ ասացիք, որ սա շատ իրատեսական է: Հաշուի առնելով, որ հենց այսօրուանից բոլոր սահմանափակումները վերացուել են, կա՞յ նման վտանգ, որ ասածը կարող է իսկապէս իրականութիւն

Անցեալ Տարի Հայաստանի Մշտական Բնակչութիւնը Պակասած Է՝ 5600-ով

2020-ի Յունուար 1-ի դրութեամբ՝ ՀՀ մշտական բնակչութեան թուաքանակը կազմած է 2 մլն 959.7 հազար մարդ: Այս տեղեկութիւնը Մայիս 5-ին հրապարակած է ՀՀ Վիճակագրական կոմիտէն: 2019 թուականի Յունուար 1-ի համեմատ ՀՀ մշտական բնակչութեան թիւը նուազած է 5.6 հազարով: 2019 թուականի նոյն ժամանակաշրջանին մշտական բնակչութեան թուաքանակը կազմած էր 2 միլիոն 965.3 հազար: ՀՀ մշտական բնակչութեան 1 մլն 892.1 հազարը կը բնակին քաղաքները, իսկ 1 067.6-ը՝ գիւղական համայնքները: Երեւան մէջ այս տարուայ Յունուար մէկի դրութեամբ՝ բնակած է 1 մլն 084.0 հազար մարդ:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ո՞վ է Մեղաւոր Կորոնավիրուսի Տարածման Դամար. Միջազգային Դանրութիւնը Փնտրում է Մեղաւորներ

Վերջին շրջանում ակտիւացել են Չինաստանի դէմ ուղղուած մեղադրանքները կորոնավիրուսի տարածման հետ կապուած: Որոշ երկրներ մեղադրական յայտարարութիւններին արդէն անցում են կատարել յստակ քայլերի՝ ընդհուպ մինչեւ Չինաստանի դէմ դատական գործերի յարուցում, հետաքննութիւնների անցկացում եւ այլն:

Այս գործընթացում առաջնային դերակատարութիւն է ստանձնել Ամերիկայի Միացեալ Նահանգները, որի հետախուզական ծառայութիւններն ակտիւ աշխատանք են տանում՝ ապացուցելու, որ Չինաստանն իր մեղքն ունի կորոնավիրուսի տարածումը ժամանակին չկանխելու մէջ: Մայիսի 3-ին ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոն յայտարարեց, որ ԱՄՆ-ն ունի «մեծ ապացոյց», որ կորոնավիրուսի տարածումը սկսուել է չինական լաբարատորիայում: Ըստ ԱՄՆ պետքարտուղարի՝ Չինաստանի կոմունիստական կուսակցութիւնը սկզբնական շրջանում արել է ամէն ինչ՝ կանխելու կորոնավիրուսի վերաբերեալ տեղեկատուութեան տարածումը, այդ թւում՝ լուսնային ոլորտի մասնագէտներին:

Բացի այդ ԱՄՆ Միտուրի եւ Միսիսիպի նահանգների գլխաւոր դատախազները դատական գործ են սկսել Չինաստանի դէմ: ԱՄՆ կոնգրէսում հանրապետականները պատրաստել են 4 օրինագիծ, որոնց հաստատումը թոյլ կտայ դատական գործ սկսել Չինաստանի դէմ: Բացի այդ, ԱՄՆ-ում առանձին անհատներ եւս դատական գործեր

են սկսել Չինաստանի դէմ՝ պահանջելով ֆինանսական եւ մարդկային կորուստների փոխհատուցում:

Պեկինն արդէն իսկ արձագանքել է ԱՄՆ այս քայլերին. Չինաստանում տարբեր իրաւաբաններ եւս դատական գործեր են սկսել ԱՄՆ դէմ՝ փաստելով, որ կորոնավիրուսը սկսել է ԱՄՆ-ում եւ ոչ Չինաստանում: Դոնալդ Թրամփին մեղադրում են Չինաստանի հեղինակութեանը հարուած հասցնելու մէջ՝ կորոնավիրուսը «չինական վիրուս» անուանելու պատճառով եւ այլն: Յատկանական է, որ Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը եւս հերքել է այն յայտարարութիւնները, թէ իբր նոր կորոնավիրուսը ստեղծուել է չինական լաբորատորիաներում՝ դրանք որակելով «շահարկումներ»:

Իսկ որքա՞ն լուրջ կարող են լինել ԱՄՆ կողմից ձեռնարկած այս քայլերի հետեւանքները: Միջազգային իրաւունքի մասնագէտների կարծիքով միջազգային իրաւունքը հնարաւորութիւն չի տալիս մէկ պետութեանը դատի տալ միւսին, քանի որ պետութիւնները համարուում են ինքնիշխան հաւասար սուբյեկտներ: ԱՄՆ-ն, ի հարկէ, կարող է այս նպատակով որոշակի փոփոխութիւններ մտցնել իր «օտարերկրեայ ինքնիշխանութիւնների անձեռնամխելիութեան մասին» օրէնքում (Foreign Sovereign Immunities Act), որը թոյլ չի տալիս դատական գործ սկսել այլ սուվերեն պետութիւնների դէմ, սակայն դժուար թէ զնայ նման քայլի, քանի որ դա կ'ազդի նաեւ իր այլ դաշնակիցների անձեռնամ-

խելութեան վրայ, օրինակ, Սաուդեան Արաբիային կը զրկուի 9/11 ահաբեկչութեան հարցում իր անձեռնամխելիութիւնից:

Այս դէպքում ինչո՞ւ են ԱՄՆ իշխանութիւններն ակտիւ ջանքեր գործադրում այս ուղղութեամբ: Պատասխանը պէտք է փնտրել նախեւառաջ ԱՄՆ ներքաղաքական տիրոջթում: Ընտրութիւններին ընդառաջ ԱՄՆ ներկայիս վարչապետը ամէն ինչ անում է մեղմելու կորոնավիրուսին ոչ պատշաճ արձագանքելու մասին իր դէմ ուղղուած մեղադրանքները: Այս նպատակով ԱՄՆ նախագահն անգամ որպէս «քառութեան նոխագ» փորձում է օգտագործել անգամ սեփական երկրի հետախուզութեանը՝ յայտարարելով, որ այն իրեն ժամանակին եւ պատշաճ չի գեկուցել պանդեմիայի վերաբերեալ: Բացի այդ այս հարցում ճնշում գործադրելով Չինաստանի վրայ՝ ԱՄՆ-ն կարող է այլ հարցերում քաղել քաղաքական դիվիդենտներ, օրինակ, Չինաստանի հետ առեւտրային բանակցութիւններում նրանից ստանալ գիշումներ:

Չինաստանի դէմ ԱՄՆ ուղղուած քայլերից զատ հետաքրքիր է նաեւ դիտարկել այլ պետութիւնների որդեգրած դիրքորոշումներն այս հարցում: Իրենց առաւել կոշտ դիրքորոշմամբ աչքի են ընկնում, օրինակ, Աւստրալիան եւ Նոր Զելանդիան: Աւստրալիայի իրաւաբանները Չինաստանից պահանջել են ֆինանսական փոխհատուցում, իսկ իշխանութիւնները անհրաժեշտ են համարում անցկացնել միջազգային հետաքննութիւն կորոնավիրուսի տարածման սկզբնաղ-

բերը պարզելու համար: Այդ կոչին է միացել նաեւ Նոր Զելանդիան:

Եւրամիութիւնն իր հերթին գեկուց է պատրաստել, որտեղ եւս նշում է, որ Չինաստանը ապատեղեկատվութիւն է տարածել կորոնավիրուսի վերաբերեալ: Ըստ տարբեր արեւմտեան աղբիւրների՝ սկզբնական գեկուցը պարունակել է աւելի կոշտ մեղադրանքներ Չինաստանի հասցէին, սակայն այն որոշակիօրէն փոփոխուել է Չինաստանի կոշտ արձագանքի պատճառով:

ՌԴ կառավարութիւնն աւելի մեղմ դիրքորոշում է որդեգրել այս հարցում: Մասնաւորապէս, ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լաւրովը կոչ է արել խուսափել մի կողմի հասցէին ուղղուած մեղադրանքներից՝ փոխարէնը կենտրոնացնելով ջանքերը պանդեմիայի յաղթահարման ուղղութեամբ:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ, ի հարկէ, կարեւոր է պարզել կորոնավիրուսի տարածման պատճառները, սակայն, դա պէտք է իրականացուի անաչառ հետաքննութեան արդիւնքում, որտեղ յետին պլան կը մղուեն բոլոր կողմերի տնտեսական եւ քաղաքական շահերը: Բացի այդ հետագայում նմանատիպ այլ պանդեմիաների տարածումը կանխելու համար, կարեւոր է նաեւ ներդնել միջազգային աւելի խիստ մեխանիզմներ, որոնք թոյլ կը տան կանխել համաճարակի տարածումը՝ դրա հետեւանքների դէմ պայքարելու եւ մեղաւորներ փնտրելու փոխարէն:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Իշխանափոխութեան Օպերացիան Երկու Օր Տեւեց. Ով Եւ Ինչպէս Տապալուեց Այս Անգամ

Անցեալ շաբաթ օլիգարխիան կամ այլ կերպ ասած հակայեղափոխական ընդդիմութիւնը փորձեց մի քանի ցնցումային ալիք կազմակերպել՝ ի պատասխան նրա, որ իշխանութիւնը ուժեղացրեց թաւանի հետգանձման աշխատանքները: Պատահական զուգահեռութեամբ Ազգային ժողովում ակտիւացան էդմոն Մարուքեանն ու Անի Սամսոնեանը, սոցցանցերում աշխուժացաւ Արթուր Վանեցեանը, իսկ փողոցում՝ Արթուր Դանիէլեանը:

Ի ուրախութիւն օլիգարխիայի՝ Գաւառում ողբերգական դէպք տեղի ունեցաւ, Լաւրովը Արցախի համար վատ բաներ ասաց, Ռուսաստանում հայկական ծխախոտով ինքնաթիռ բռնեցին, կորոնավիրուսով հիւանդներն էլ մի քանի տասնեակով աւելացան: Այս ամէնից մեծ երջանկութիւն ապրելով՝ նախկինները միացրին իւրային կեղտոտ լրատուամիջոցներին, ծախու քաղաքագէտներին ու վարկաբեկուած քաղաքական գործիչներին: Եղած բոլոր միջադէպերին դրանք սկսեցին ստէր ու չափազանցումներ աւելացնել: Օրինակ, յորինեցին, որ ինքնաթիռը պատկանում էր Նիկոլ Փաշինեանի աներձագ Հրաչեայ Ծակոբեանին, այնինչ պարզուեց՝ ծխախոտը պատկանում էր հէնց իրենց՝ «նախկինների արխայութեանը»: Յորինեցին փոստալաւապետ Տիգրան Աւին-

եանի հետ ծեծկոտուք եւ նրա հրաժարական, բայց այդ ամէնը արագ հերքուեց: Գաւառի դէպքերով գոյները խտացրին որքան կարող էին, բայց յետոյ պարզուեց, որ մարդկանց հիւանդանոցում չեն մորթել ու անպատժելիութիւն էլ չկայ, որովհետեւ 15 մարդ ձերբակալուեց ու կալանաւորուեց: Իրեն շատ աղեկկատ համարող Արթուր Դանիէլեանը կարողացաւ փողոցում կռիւ հրահրել երկրի բարձրագոյն պաշտօնեաներից մէկին ամենակեղտոտ ձեւով հայհոյելով, բայց հասարակութիւնը այս սադրանքի ժամանակ էլ պաշտպանեց Ալեն Սիմոնեանին:

Լաւրովի ասածներից խիստ ոգեւորուած անցան յարձակման, բայց նրանք էլ արդէն չեն հասկանում, որ կտրուել են ինֆորմացիայից, յատկապէս միջազգային յարաբերութիւններից ու որքան էլ իրենցից շատերի քաղաքական տէրերը Մոսկուայում են, միեւնոյնն է՝ Մոսկուայի ներքին ու միջազգային խաղերին իրենք շատ անտեղեկ են: Նրանց համար լաւագոյն սցենարի դէպքում Մոսկուան իրենց մի կարճ ժամանակ կ'օգտագործի ներհայաստանեան խաղերի համար, կը քամի ապաստան հայցողներին եւ ուշ թէ շուտ մատաղ կ'անի Հայաստանի լեզիտիմ իշխանութիւնների ոտքերի տակ՝ յանուն միջպետական լաւ յարաբերութիւնների:

Կարճ ասած, ողջ անցնող շաբաթը օլիգարխիան իր հակայական ուժերը մսխեց ցնցման ալիք ստեղծելու համար: Այդքան մարդ ու փող դրեց, որպէսզի բախտի բերմամբ առաջ եկած պրոբլեմներից մեծ ցունամի սարքի, սակայն ամէն ինչ տեւեց միայն մի քանի օր: Օլիգարխիայի ողջ արսենալը փշրուեց իշխանութեան մէկ-երկու հարուածներին տակ: Օլիգարխիայի դրած միլիոնների դիմաց Փաշինյեանն ունի ժողովրդի իմաստնութիւն, որը շատ լաւ հասկանում է, թէ ով ով է քաղաքականութեան մէջ: Երեւանեան ու ֆէյսբուքեան մի քանի հազար ինտելեկտուալներ ի հարկէ կարող են պահի տակ իրար խառնուել օլիգարխիայի սկսած երաժշտական կլիպերից ու ֆէյք նիւզերից, բայց դա էլ արդէն շատ կարճատեւ է ֆեկտ է ունենում:

Ի վերջոյ մարդիկ շուտով մեծամասամբ կ'անցնեն իրենց աշխատանքին, կը վախեն հայկական գունաւոր ու համեղ ամառը, իսկ օլիգարխիան կը մնայ իր մսխուած դոլարներով, իր սուտիկ լրատուամիջոցներով ու ապաշնորհ քաղաքագէտներով, ապօրինի գոյքի բռնազանձման օրէնքով, օր-օրի ուժեղացող վարչական ռեսուրսով ու ժողովրդի վստահութիւնը վայելող ու ամէն օր աւելի արհեստա-



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԱԾ Հետախուզում Յայտարարուած Է Գուրգէն Խաչատրեանի Դէմ

Հետախուզութիւն յայտարարուած է Պետական եկամուտներու կոմիտէի նախկին ղեկավար Գագիկ Խաչատրեանի որդիին՝ Գուրգէն Խաչատրեանին դէմ, քանի որ ան թաքնուուած է քննութեան, կը յայտարարէ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ), աւելցնելով, որ միջոցներ ձեռնարկած են փախուստի դիմած մեղադրեալին յայտնաբերելու ու պատասխանատուութեան կանչելու:



Հետախուզում մէջ գտնուող Գուրգէն Խաչատրեան

Գատարանը Գուրգէն Խաչատրեանին կալանաւորելու որոշում առած էր, սակայն ան չէր ներկայացած իրաւապահներուն: Արդեօ՞ք «Իւքոմ» ընկերութեան տնօրէններու խորհուրդի նախագահ Գուրգէն Խաչատրեանը լքած է երկիրը, թէ՞ ոչ, իր պաշտպան երեմ Սարգսեան կը հրաժարի մեկնաբանել: Իսկ թէ ինչո՞ւ կը թաքնուի իրաւապահներէն, ինքը՝ Խաչատրեան, տարածուած յայտարարութեամբ հիմնաւորած է, թէ պատճառը՝ իր նկատմամբ կատարուած անօրինական ու ուղղորդուած գործողութիւններն են:

գործելով, պետութեան յափշտակած են աւելի քան 1,5 միլիարդ դրամ (Աւելի քան երեք միլիոն տոլար Մ.): Այդ գոյքի օգտագործումէն ստացուած եկամուտները տարբեր եղանակներով ու ալլ անձերու անուններով փոխակերպուած են կանխիկ դրամական միջոցներու, որոնք փաստացի տնօրինուած են Խաչատրեաններու ընտանիքի ու անոնց ազգականի կողմէն, եւ երրորդ անձի միջոցով մուտքագրուած են «Իւքոմ» ընկերութիւն: Գուրգէն Խաչատրեան, «Իւքոմի» հիմնական սեփականատէրերէն մէկը:

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը ծաւալուն հաղորդագրութեամբ Խաչատրեաններու ընտանիքին վերաբերող քրէական գործի մասին՝ ներկայացուցած է որոշ մանրամասնութիւններ, թէ Խաչատրեանի որդիներն ու ազգականը, անոր պաշտօնով պայմանաւորուած, հարկային եւ մաքսային մարմիններուն ապրանքներ մատակարարելու եւ տեղեկատուական ոլորտէն ներս ծառայութիւններ մատուցելու նպատակով հիմնադրած են առեւտրային կազմակերպութիւն: Իսկ ինքը՝ Գագիկ Խաչատրեան, պաշտօնակազմի դիրքը շահագործելով եւ անձնական շահերէ ելնելով, աջակցած է այդ կազմակերպութիւններուն:

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը խուզարկած է «Իւքոմի» նոր տնօրէն Արա Խաչատրեանի բնակարանը, մեքենան ու «Իւքոմ»ը:

Պաշտօնէական դիրքի չարաչափման եւ առանձնապէս խոշոր չափով վատնում կատարելու համար մեղադրուող Գուրգէն Խաչատրեանի հայրը՝ ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրեան այժմ կալանաւորուած է:

Խաչատրեանները, ըստ ԱԱԾ-ի, պաշտօնէական դիրքը օգտա-

Միքայէլ Մինասեանի Տեսնիւթի Վերաբերեալ Նիւթերը Ուղարկուած Եմ Յատուկ Քննչական Ծառայութիւն

Վատիկանի մօտ Հայաստանի նախկին դեսպան, նախկին նախագահ Սերժ Սարգսեանի փեսայ՝ Միքայէլ Մինասեանի նախօրէին հրապարակած տեսանիւթի վերաբերեալ նիւթերը ուղարկուած են Յատուկ Քննչական Ծառայութիւնը ուսումնասիրութեան համար, կը յայտարարէ գլխաւոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամեան:



Նախկին նախագահ Սերժ Սարգսեանի փեսայ՝ Միքայէլ Մինասեան

Իր տեսաուղերձով հայաստանեան իրաւապահներէն թաքնուող Միքայէլ Մինասեան, որ մեղադրուած է ապօրինի հարստացման, փողերու լուսցման եւ յայտարարագիրը կեղծ տուեալներ ներկայացնելու համար, կը հաստատէ, որ Արթուր Վանեցեանը ԱԱԾ տնօրէնի պաշտօն գրաւած ժամանակ հանդիպած է իր հետ՝ իբրեւ Նիկոլ Փաշինեանի սուբհանդակ եւ առաջարկներ ըրած: «Ասաց, որ քեզ ունենք առաջարկ, մեր առաջարկը հետեւեալն է՝ դու մուծում ես խորհրդանշական գումար, եւ դրանից յետոյ դու չես գալիս Հայաստան երբեք, գոնէ թէ առաջին տարիները ընթացքում: Բոլոր այն մարդիկ, որոնք այս կամ այն ձեւով առնչուում են քեզ, լսում են քո խօսքը, իրենք դադարում են պայ-

քարել Նիկոլ Փաշինեանի դէմ, դու դառնում ես ապաքաղաքական մարդ, շարունակում ես ապրել երջանիկ, քո կեանքով Հայաստանում, բայց այդ վայրկեանից, երբ մենք պայմանաւորուում ենք, բոլոր քրէական գործընթացները միանգամից դադարեցուում են»: Արթուր Վանեցեանի մամուլը խօսնակ՝ Քրիստինէ Մելքոնեան

Գլխաւոր Դատախազը Անդրադարձաւ Նախկին Պաշտօնեաներուն Շքեղ Առանձնատուներու Հարցին



Նախկին պաշտօնեաներու շքեղ առանձնատուները՝ Երեւանի մէջ

Գլխաւոր դատախազ՝ Արթուր Դաւթեան պատասխանելով պատգամաւորներու հարցումին, անդրադարձաւ մամուլի մէջ «ընտրեալներու թաղամասի» վերաբերեալ հրապարակումներուն: Խօսքը նախկին պաշտօնեաներու շքեղ առանձնատուներուն մասին է:

Գասպարեանի առանձնատան վերաբերեալ: Արթուր Դաւթեան ըսաւ, որ Յատուկ Քննչական Ծառայութեան վարոյթով, նախկին ոստիկանապետ Վլատիմիր Գասպարեանի առանձնատան փաստով քրէական գործ կը քննուի:

«Ինչ վերաբերում է ընտրեալների թաղամաս եւ այլն, ես շատ զաղտնիք չեմ ուզում բացել, բայց մենք Ապօրինի գոյքի բռնագանձման մասին օրէնքին պատրաստուում ենք՝ նախագծից սկսած: Այդ պատրաստութիւնը նրանում է կայանում, որ մենք արդէն քրէական գործերով, այսպէս կոչուած, այդ անձանց՝ մեր ապագայ չակերտաւոր գործընկերների գոյքային միաւորներն ուսումնասիրութեան առարկայ դարձնում ենք: Որ պահին օրէնքն ուժի մէջ կը մտնի, դրանցով արդէն որոշակի գործողութիւններ կ'իրագործուեն», - ըսաւ գլխաւոր դատախազը:

Տարբեր նախաքննական մարմիններու վարոյթին մէջ, քանի մը քրէական գործեր ունինք, աննախադէպ ծաւալներ ունեցող քննութիւն է, եւ ունինք գործնական տեղեկութիւններ, փաստական տուեալներ, որոնց վերլուծութիւնը կը վկայէ 15 տարի թաքցուած եւ արտօնեալ տնտեսական գործունէութիւն վարող հաստատութիւններու մասին:

Ըստ դատախազին՝ մամուլի հրապարակումներուն հիման վրայ նման քրէական գործեր կան, մեծ մասով քրէական հետապնդումներ կատարուած են:

Դատախազի համաձայն՝ տնտեսական գործունէութիւնը յաճախ կատարուած է շուրջ 100 ֆորմալ պաշտօնական տնտեսական սուբյեկտների հաստատութիւններու կողմէ եւ գործնական, փաստական տուեալներու վերլուծութիւնը կը վկայէ, թէ այդ ամբողջ գործունէութիւնը մէկ-երկու կէտէ ղեկավարուած է, որովհետեւ նախագիծը այնպէս է, որ այդ գործունէութեան՝ յատկապէս արտօնեալ հատուածը, այլ կերպ քան կազմակերպուած եղանակով չէր կրնար իրագործուիլ:

Հարց ուղղուեցաւ նաեւ նախկին ոստիկանապետ Վլատիմիր

տեղեկացուց, որ այս փուլին Մինասեանի յայտարարութիւնը մեկնաբանելու անհրաժեշտութիւն չեն տեսներ, իսկ Արթուր Վանեցեանը Միքայէլ Մինասեանի վերաբերեալ իր վերաբերմունքը յայտնած էր իր հրաժարականէն յետոյ տուած հարցազրոյցի ընթացքին, երբ յայտարարած էր, որ թող ոչ ոք չփորձէ ինքզինքը կապել Մինասեանի հետ, «նա մի մարդ է, որ պէտք է դեռ շատ հարցերի պատասխան տայ»:

րեւոյթ պաշտօնէական լիազօրութիւններու չարաչափմամբ՝ ձեռք բերած է «Չանգեցուրի պղնձամուրի պտենային գործարան»ի Միքայէլ Մինասեանի բաժինը:

Իշխող «Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունց ըսած է, որ Մինասեանի յայտարարութեան հետ կապուած մեկնաբանութիւն չունին, որ այդ իրաւապահներու գործն է:

«Տպաւորութիւն է, որ սրա արդիւնքում է, որ Միքայէլ Մինասեանի քորուփցիոն համակարգի առանցքային անձինք, լինելով հաւանական մեղադրեալներ, լքել են Հայաստանը, ինչն էլ դարձել է Մինասեանի քորուփցիոն արարքների հետաքննութեան հական խոչընդոտ», - գրած էր վարչապետի խօսնակը:

«Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան Տարօն Միմոնեան եւս կը կարծէ, թէ սա ուշադրութիւն չեղելու փորձ է, սակայն ամէն պարագային իշխանութեան պէտք է արձագանգեն Մինասեանի պնդումներուն:

Անկախ պատգամաւոր Արման Պապաճանեան ըսած է. «Կարելի է ուղիղ ասել, որ Վանեցեանը սեփական զեղարուեստական փաթեթաւորմամբ է բանակցել Միքայէլ Մինասեանի հետ, որովհետեւ ես հեռու եմ այն մտքից, որ Հայաստանի իշխանութիւնները, մասնաւորապէս Նիկոլ Փաշինեանը որեւէ կերպ որեւէ առաջարկ կ'անէր մէկի փեսային, ում ընդամենը դրանից մէկ տարի առաջ մերժել էին, եւ մերժել էր ոչ միայն այդ անձին, այլեւ ամբողջ համակարգը, որի կարկառուն եւ առանցքային ներկայացուցիչը եղել է Միքայէլ Մինասեանը»:

ԼՈՒՐԵՐ

«Քորոնա» ժահրի Տնտեսական Հետեւանքներու Չեզոքացման Համար Տրամադրուած Է Շուրջ 130 Միլիոն Տոլար



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA www.gov.am

ՀՀ կառավարութեան նիստը՝ վարչապետի գլխաւորութեամբ

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ՝ կառավարութեան Մայիս 5-ի նիստին շարունակուած են «Քորոնա» ժահրի հետեւանքներու չեզոքացման քաղաքականութեան շուրջ քննարկումները:

Ամփոփուած են կառավարութեան կողմէ ընդունուած հակաճգնաժամային միջոցառումներու կատարման արդիւնքներն ու ընթացիկ ցուցանիշները: Փոխ վարչապետ Մհեր Գրիգորեան գեկուցած է տրամադրուած տնտեսական եւ ընկերային օժանդակութեան ծաւալներուն մասին. Մայիս 5-ի դրութեամբ օժանդակութեան ընդհանուր հասանելի ծաւալը կազմած է աւելի քան 62 միլիարդ դրամ (Շուրջ 130 միլիոն Տոլար): Աջակցութիւն ստացած է մօտաւոր 24000 տնտեսավարող, 360000 ֆիզիքական անձ, իսկ ամսական վճարումներու համար տրամադրուած օժանդակութեան շահառուներու քանակը գե-

րազանցած է 1 միլիոնը:

Խորհրդակցութեան ընթացքին քննարկուած են «Քորոնա» ժահրի հետեւանքները մեղմացնելու հետ առնչուող նոր գաղափարներ, որոնք կը վերաբերին ընկերային թիրախային աջակցութեան շահառուներու շրջանակի ընդլայնման, տնտեսական օժանդակութեան գործիքներու կիրառման, գիւղացիական տնտեսութիւններու խթանման եւ այլ հարցերու: Անոնց վերաբերեալ ծաւալած է միտքերու շահագրգիռ փոխանակութիւն:

Ամփոփելով վարչապետը նշած է, որ հակաճգնաժամային քաղաքականութիւնը պէտք է միտուած ըլլայ աշխատանքի խրախուսման եւ անգամ մը եւս ընդգծած օժանդակութեան միջոցառումներու հասցեականութեան կարեւորութիւնը: Նիկոլ Փաշինեան յանձնարարած է շարունակել քննարկումները այս տրամաբանութեամբ եւ ներկայացնել առաջարկներ:

Ծեծկռտուք Ազգային ժողովի Փոխ Նախագահ Ալէն Սիմոնեանի եւ «Ադեկվադ» Կուսակցութեան Ներկայացուցիչ Արթուր Դանիէլեանի Միջեւ

Ազգային ժողովի փոխ նախագահ Ալէն Սիմոնեան «Ազատութեան» պատմած է, որ «Ադեկվադ»-ի հիմնադիրներէն Արթուր Դանիէլեան սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցուցած է, որմէ յետոյ ծեծկռտուք սկսած է:

«Դանիէլեան Արթուրն էր իրա հետի երկու աղեկվատների հետ, ամենայն հաւանականութեամբ՝ էն մէկին ճանաչում եմ դէմքով: Զբօսնելուց սեռական բնույթի հայհոյանք հնչեցրեց, որին ի պատասխան ծեծկռտուք սկսուեց, որի հետեւանքով ամենայն հաւանականութեամբ իր քիթն է վնասուել, իմ՝ քիմքի մասը», - ըսաւ Սիմոնեան:

«Ազատութեան» հարցին, թէ այսինքն Արթուր Դանիէլեանը եւ ուրիշ քանի մը հոգի յարձակա՞ծ են իր վրայ, Սիմոնեան պատասխանեց. «Այո, երեքով էին, ձիւղ է՝ երկուսը փորձում էին կանգնեցնել, բայց այնուամենայնիւ»:

Իր հերթին Դանիէլեանի կուսակից ընկեր՝ «Պրոկիւր» կայքի խմբագիր՝ Կոնստանտին Տէրնաքալեանը գրած է, թէ Ալէն Սիմոնեանը յարձակած է Դանիէլեանի վրայ:

Գաւառի Միջադէպերուն Գործով Չերթակալուած Է 15 Անձ. Քննչական Կոմիտէ

Գաւառի մէջ երկու անձի սպանութեան եւ չորս անձի հրագենային մարմնական վնասուածքներ պատճառելու, խուճմբ մը անձերու կողմէ բռնութեամբ եւ գոյք ոչնչացնելով գուգորդուած զանգուածային անկարգութիւններու դէպքերու առթիւ քննուող քրէական գործի քննութեամբ, տուեալներ ձեռք բերուած են, նշուած միջադէպերուն եւս 3 անձի առերեւոյթ մասնակցութեան վերաբերեալ, կը յայտնեն Քննչական կոմիտէն:

Վարոյթը կատարող մարմինը Ապրիլ 30-ին որոշում տուած է զանոնք ձերբակալելու մասին, որու իրագործումը յանձնարարուած է ոստիկանութեան:

Չանգուածային անկարգութիւններուն մասնակցելու կասկածանքով այս պահու դրութեամբ, ըստ Քննչական կոմիտէին՝ ձերբակալուած է 15 անձ, եւս 3 անձ ձերբակալելու որոշում տրուած է:

Ապօրինի Հարստութիւնը Վերադարձնելու Գործին Մէջ Պէտք Է Ներգրաւել Սփիւռքահայութիւնը. Անդրանիկ Քոչարեան

Ազգային ժողովի յայտարարութիւններու ժամուն «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր Անդրանիկ Քոչարեան անդրադարձաւ ապօրինի հարստութեան վերադարձի խնդրին:

«Ապօրինի ծագում ունեցող ունեցուածքի վերադարձին գուգահեռ պէտք է լրջօրէն գեղուել ՀՀ-ից դուրս հանուած գումարներու վերադարձի խնդրով», - ըսաւ Քոչարեան: Ըստ պատգամաւորին՝ վստահաբար կարելի է ըսել, թէ հսկայական ծաւալներու գումարներ դուրս հանուած են Հայաստանի տարածքէն դէպի Եւրոպական միութեան երկիրներ, Ռուսաստան, Արաբական Միացեալ Էմիրութիւններ եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներ:

«Օտարերկրեայ պետութիւններում տեղակալուած ապօրինի հարստութիւնների վերադարձը պետական պիտո՞ճ պէտք է դարձնել համընդհանուր օրակարգի հարց՝ ներգրաւելով ՀՀ քաղաքացիներին եւ աշխարհասփիւռ հայութեանը, քանի որ խնդիրը համակարգային լուծում է պահանջում: Անհրաժեշտ են յստակ ծրագրուած գործողութիւններ, որոնք նախ եւ առաջ պէտք է ուղղուած լինեն այդ հարստութիւնների տեղակալումը բացառելուն: Այնուհետեւ պէտք է ուսումնասիրել եւ պարզել ՀՀ համար առաւել բարենպաստ օրէնսդրութիւն ունեցող երկիրը եւ թիրախաւորել այդ իրաւագորութիւնները: Այս պարագայում անգնահատելի է միջազգային համագործակցութիւնը, որը կարելի է օգտագործել բաւական արդիւնաւէտ ձեւով», - ըսաւ Քոչարեան:



Աժ պատգամաւոր Անդրանիկ Քոչարեան

Ըստ պատգամաւորին, օրինակ, Եւրոպական միութեան երկրի մը մէջ վարոյթ յարուցելով, ան կը ճանչցուի Եւրոպական Միութեան միւս պետութիւններու կողմէ, եւ վերջինները պարտաւոր են համագործակցել վարոյթ յարուցող երկիրներուն հետ:

Քոչարեանի համաձայն՝ պէտք է ուսումնասիրել ՀՀ կողմէ վաւերացուած միջազգային համաձայնագիրներու էութիւնը: «Միջազգային համագործակցութիւնը թոյլ է տալիս առաւելագոյն օգտագործել սահմանուած լծակները: Դրանից յետոյ անհրաժեշտ է անյապաղ ձեւաւորուի լինել ՀՀ տարածքից դուրս գտնուող հարստութիւնների ստեղծմանը եւ վերջապէս վերադարձմանը», - աւելցուց ան նշելով, որ պետական պիտո՞ճ պէտք է վերադարձնել այն ամէնը, ինչ կը պատկանի ժողովուրդին ու երկրին:

Նախագահը Ստորագրած Է Երկու Գրիգորեանի Շրջակայ Միջավայրի Նախարարի Պաշտօնէն Ազատելու Հրամանագիրը

Նախագահ Արմէն Սարգսեան ստորագրած է շրջակայ միջավայրի նախարարի պաշտօնէն երկու Գրիգորեանին ազատելու հրամանագիրը: Այս մասին կը յայտնէ նախագահի պաշտօնական կայքէջը:

Աւելի վաղ «Ազատութիւնը» տեղեկացուցած էր, որ Գրիգորեան հրաժարականը ներկայացուցած էր, սակայն նախարարութեանն ոչ հերքած էին եւ ոչ հաստատած այդ տեղեկութիւնը:

Երկու Գրիգորեան շրջակայ միջավայրի նախարար նշանակուած է 2019-ի Յունիս 1-ին, մինչ այդ, 2018 թուականի թաւշեայ լեղափոխութեանն յետոյ, Մայիս 12-էն գրաւած է բնապահպանութեան նախարարի պաշտօնը:

Արցախ Մէջ Ականի Պայթումէն Զինուոր Մահացած Է

Մայիս 4-ին, ժամը 19:05-ի սահմաններուն ականի պայթումին հետեւանքով մահացու վիրաւորանք ստացած է Պաշտպանութեան Բանակի հարաւային ուղղութեամբ տեղակալուած զօրամասերէն մէկուն պայմանագրային զինծառայող՝ 1988-ի ծնունդ՝ Տարօն Ռուբիկի Պողոսեան:

Այս մասին կը տեղեկացնեն Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութեան մամուլ ծառայութեանն:

Դէպքի մանրամասնութիւնները պարզելու համար կը կատարուի քննութիւն:

Հայաստանի Պետական Պարտքը 7.3 Միլիարդ Տոլար

2020-ի Մարտի վերջաւորութեան դրութեամբ՝ Հայաստանի պետական պարտքը կազմած է 3 դրիլիոն 650 միլիարդ 741.8 մլն դրամ կամ 7 միլիարդ 289.820 մլն տոլար: Ինչպէս կը տեղեկացնէ ՀՀ վիճակագրական կոմիտէն, որուն կարգին՝ արտաքին պարտքը կազմած է 2 դրիլիոն 872 միլիարդ 579.4 մլն դրամ կամ 5 միլիարդ 735.981 մլն տոլար:

5 միլիարդ 236.453 մլն տոլար կազմած է կառավարութեան պարտքը: Այս տարուայ Յունուարին, Հայաստանի արտաքին պարտքը կազմած էր 5 միլիարդ 751.541 մլն տոլար, իսկ Փետրուարին՝ 5 միլիարդ 737.679 մլն տոլար: Տոլարային արտադրութեամբ՝ Մարտին, Փետրուարի համեմատ արտաքին պարտքը նուազած է 1.698 մլն տոլարով:

Հայաստան Մերժած է Սպառնալիքի Գործոնը Բանակցային Գործընթացին, Կը Հաստատէ Զոհրապ Մնացականեան



Նախարար՝ Զոհրապ Մնացականեան Ազգային ժողովէն ներս տեղի ունեցած լսումներու ընթացքին

Ապրիլեան պատերազմի կրկնութիւն տեղի պիտի չունենայ, Հայաստան կտրականապէս մերժած է սպառնալիքի գործօնը դաւաճող հիմնախնդրի կարգաւորման բանակցային գործընթացին, Ազգային ժողովին մէջ, Մայիս 4-ին, յայտարարեց արտաքին գործոց նախարար՝ Զոհրապ Մնացականեան՝ արձագանգելով Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար՝ Զաքիր Հասանովի նախօրէին ըրած ռազմաշունչ յայտարարութեան։

«Մենք չենք կարող ստեղծել իրավիճակ, երբ որ մեր ժողովուրդի համար անվտանգութեան համակարգը դառնում է խոցելի»։

Երկու օր առաջ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանովը երկրի գինուած ուժերու ղեկավարութեան հետ հանդիպման ընթացքին, յայտարարած է, թէ կտրուկ մեծցած է ռազմական գործողութիւնները վերսկսելու հաւանականութիւնը, ինչ որ պայմանաւորուած է հայկական կողմի սադրիչ գործողութիւններով։ Ան յանձնարարած է ուժեղացնել հետախուզութեան բոլոր տեսակները առաջնադիր վրայ։

Հայաստանի արտաքին գերատեսչութեան ղեկավար Մնացականեանի խօսքով՝ անհնար է պատկերացնել իրական առաջընթաց բանակցութիւններուն, եթէ լարուածութիւն կայ։

«Չենք հաւատում, որ հնարաւոր է իրական առաջընթաց ունենալ, երբ որ քեզ առաջարկուած է, որ հնարաւոր է մէկ ձեռքով բանակցել, միւս ձեռքով կրակել։ Խստօրէն պնդում ենք՝ հնարաւոր չէ»։

Հայաստանի իշխանութիւնները բանակցային գործընթացին նկատմամբ կառուցողական տրամադրուած են։

«Այդ մեթոտով շարունակուած ենք, բայց կառուցողական չի նշանակում, որ մենք կարող ենք աշխատել մի իրավիճակի մէջ, երբ որ մեզ համար, մեր ազգային շահերի համար ստեղծուած է վտանգ, ստեղծուած է անընդունելի իրավիճակ»։

Զոհրապ Մնացականեան կ'ընդգծէ, որ 2016-ի ապրիլեան իրադարձութիւններու, նաեւ 90-ականներու պատերազմի կրկնութիւն տեղի պիտի չունենայ, եւ Հայաստանի իշխանութիւնները վճռական են այս հարցով։ Ան կը վստահեցնէ, որ դաւաճող հիմնախնդրի կարգաւորումը հիմնուած է փոխզիջումի սկզբունքին վրայ։

«Չի կարող որեւէ մէկը սպասել, որ Հայաստանը որեւէ քայլ կատարի, որը համադրելի չէ, որը ենթադրուած է զիջում, եւ որը վնասում է մեր ազգային անվտանգութեանը։ Սրանք շատ էական են, ուղղակի մնալ սառնասիրտ եւ հանգիստ»։

Գլխաւորը Ղարաբաղի ժողովուրդի անվտանգութիւնն է, կ'ընդգծէ նախարարը։

«Մեր դիրքերը շատ-շատ աւելի ամուր են, եւ ես շատ հանգիստ եմ գգում, ի դէպ, այդ առումով որովհետեւ ընդհանուր առմամբ մեր հասարակութեան մէջ ես գնահատում եմ, որ կայ համաձայնութիւն այս ամէնի շուրջ, որը էլ աւելի ամրապնդում է մեր դիրքերը»։

Ապրիլ 29-ին, Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնը յայտնեց, որ շփման գիծի արեւելեան հատուածին վրայ հակառակորդը կիրառած է 60 միլիմետրանոց ականանետեր, բայց եւ այնպէս Պաշտպանութեան բանակը կորուստներ չէ ունեցած։ Յատկանշական է, որ վերջին անգամ Ատրպէյճանական զինուժը հայկական կողմի ուղղութեամբ ականանետեր կիրառած էր 2019-ի Յունիսին։

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան խօսակ Շուշան Ստեփանեան «Ազատութեան» յայտնեց, որ այս պահուն շփման գիծը հանգիստ է։

«Որեւէ լարուածութիւն չկայ, եւ մտահոգիչ տեղաշարժեր կամ կուտակումներ եւս չկան»։

կան նորմերու ոտնահարման վերականգնելու դժուարին մարտահրաւէրներուն հետ», - կը նշեն ամերիկացի փորձագէտները։

Անդրադառնալով Նիկոլ Փաշինեանի իշխանութեան առջեւ ծառայած առաւել տեղային բնութիւն խնդիրներուն՝ Freedom House-ի մասնագէտները յատկապէս կանգ

Վերջին Երկու Տարիներուն

Շարունակուած էջ 1-էն

կող Փաշինեան եւ Ուքրանիայի նախագահ Վլատիմիր Զելենսքին բախում ունին վստահութեան ամրապնդման, իրենց հետ կապուած յոյսերը արդարացնելու, [կառավարման] քորումփացուած համակարգերը առանց ժողովրդավարա-

ՄԴՀԿ «Տիրունի» Ուսանողական-Երիտասարդական Միութեան Յայտարարութիւնը Մայիս 1-ի Առիթով



«Տիրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնը շնորհաւորում է Աշխատաւորների համաշխարհային համերաշխութեան օրը՝ Մայիս 1-ը։

Յաւաք սրտի հերթական անգամ կարիք է առաջանում նշել եւ բարձրաձայնել, որ Հայաստանում կան աշխատաւորների իրաւունքների հետ կապուած բազմաթիւ օրհասական խնդիրներ, որոնք սրացել են արտակարգ դրութեան պայմաններում, մեր հայրնիքում յետագայ զարգացումները դրականօրէն շրջելու համար անհրաժեշտ է օր առաջ լուծել դրանց կարօտն ունեցող հարցերի։

1. Հայաստանում ձեւականորէն գրանցուած են, սակայն չեն գործում արհեստակցական միութիւնները, որոնք պարտավոր են զբաղուել աշխատաւոր մարդու իրաւունքների պաշտպանութեամբ։ Հրամայական է առաջացել ստեղծել նոր արհեստակցական միութիւններ, որոնք պէտք է բաժանուած լինեն պետութիւնից եւ ֆինանսական կախում չունենան՝ այդ կերպ ապահովելով իրենց գործունէութեան անկախութիւնը։

2. Պաշտպանուած չէ աշխատաւորն ինքը։ Որպէս կանոն տեղեկ չլինելով սեփական իրաւունքներից, գործատուն, աշխատանքի վերցնելով, չի կնքում պատշաճ աշխատանքային պայմանագիր, որի արդիւնքում հնարաւորութիւն է ունենում սեփական քմահաճոյքով հեռացնել աշխատանքից, երբ ցանկանում է։

3. Չի պահպանուած ըստ մասնագիտութիւնների սահմանուած առաւելագոյն ժամանաւանկի աշխատանքային գրաֆիկը, իսկ յաւելու աշխատանքի համար ճնշող մեծամասնութեամբ վարձատրութիւն չկայ։

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան երիտասարդները վստահ են, որ երկրի սոցիալական պաշտպանութեան եւ աշխատաւորի իրաւունքների պաշտպանութեան ոլորտները պէտք է դիտարկել իբրեւ ռազմավարական առաջնահերթութիւն եւ անյապող զբաղուել այս խնդիրների լուծմամբ։ Երկրի շէնսցնող ոչ թէ ուրիշ աշխատանքի հաշուին հարստացածն է, այլ մտաւոր ու ֆիզիկական աշխատանքով զբաղվողը, որոնց աշխատանքով էլ ապրում է Հայաստանը։

ՄԴՀԿ «Տիրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնն իր համերաշխութիւնն ու օժանդակութիւնն է յայտնում բոլոր հայ աշխատաւորներին, մենք պատրաստ ենք համագործակցութեան յանուն մեր բոլորի ընդհանուր շահերի ոչ միայն աշխատաւորների այլեւ անկախ աշխատանքային, հասարակական խմբերի հետ։

Երեւան Մայիս 1, 2020

կ'առնեն Ամուլսարի ոսկիի հանքի շահագործման շուրջ ծաւալուած վէճին վրայ։ Ամուլսարի ճակատագիրը, ըստ գեկոյցի հեղինակներուն, «Հայաստանի վարչապետի համար գլխացաւ դարձած է»։

«Փաշինեանը այս խնդիրը ժառանգած է նախորդ քորումփացուած վարչակազմէն։ Աքթիվիստները ամիսներ շարունակ արգելափակուած կը պահեն հանքավայր տանող ճանապարհները։ Ըստ անոնց՝ եթէ Փաշինեանը հաւանութիւն տայ այս ծրագրի իրագործման, ապա կ'ապացուցէ, որ չի տարբերում այն ղեկավարներէն, որոնց ինք հեռացուցած է իշխանութիւնէն», - ըստուած է գեկոյցով։

Զեկոյցի հեղինակները նաեւ յստակ խորհուրդներ կ'ուղղեն արեւմտեան կառավարութիւններուն, ըստ իրենց համոզումին։

«Ժողովրդավարութեան զարգացումը եւ մարդու իրաւունքները երկկողմանի յարաբերութիւններու առաջնահերթութիւնը պէտք է դառնան։ Յատուկ ուշադրութիւն պէտք է դարձուի այն պետութիւններուն, որոնց կառավարման համակարգը լուրջ փոփոխութեան փուլի մէջ է, մասնաւորաբար Հայաստանին եւ Ուքրանիային», - կը նշէ գեկոյցը։

«Հայաստանի մէջ հարկաւոր է լուրջ ներդրումներ կատարել օրէնքի գերակայութեան ու անկախ

հաստատութիւններուն աջակցութիւն ապահովելու նպատակով։ Խօսքը մասնաւորաբար դատական համակարգի եւ ոստիկանութեան համապարփակ բարեփոխումներու մասին է», - կը նշեն Freedom House-ի փորձագէտները՝ աւելցնելով, թէ. - «2018 թուականին Հայաստանի մէջ տեղի ունեցած թաւշեայ յեղափոխութեան հիմքը քաղաքական փոփոխութիւններու, օրէնքի գերակայութեան եւ համակարգային բորունփցիան արմատախիլ ընելու շուրջ համազգային համաձայնութեան առկայութիւնն էր»։

«Այս պատմական հնարաւորութիւն կը ստեղծէ ժողովրդավարութեան աջակիցներուն համար թէ՛ երկրին ներս եւ թէ՛ անոր սահմաններէն դուրս։ Թէ՛ Միացեալ Նահանգները եւ թէ՛ Եւրոպական Միութիւնը մեծցուցած են Հայաստանին ցուցաբերուող աջակցութիւնը, բայց անոնց ծրագրերը պէտք է միտուած ըլլան նախեալ առաջնահերթութեան համերաշխութեան ամրապնդման ու քաղաքական բեւեռացուածութեան յաղթահարման։ Այս մարտահրաւէրներու յաղթահարումը կրնայ առանց քայլի նշանակութիւն ունենալ միւս բոլոր ոլորտներուն մէջ կատարուած բարեփոխութիւններու յաջողութեան համար», - համոզուած են Freedom House-ի ամենամեայ գեկոյցի հեղինակները։

Երբ Հոտը Ելլէ Մարդուն

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Կարող մարդիկ ընդհանրապես կ'ըլլան առաջնորդ ու ղեկավար, եւ քիչեր միայն իրենց հմայքը առանց կորսնցնելու կը շարունակեն հուշակ վայելել՝ ժողովուրդին ծառայելով եւ անոր սիրոյն արժանանալով:

Ամէն մարդ զօրաւոր անհատականութիւն չ'ունենար ու իր շուրջիններուն վրայ հեղինակութիւն հաստատելու գործով չի զբաղիր եւ ընդհանրապես ղեկավարի մը կամ առաջնորդի մը ինքնասիրութեան ու փառասիրութեան գոհը կը դառնայ:

Հին օրերուն, տոհմեր կամ ցեղեր, ենթարկուելով իրենց մէջ գտնուող ֆիզիքայէս զօրաւորի մը ասին ու սարսափին, անոր փէշին տակ ծուրած, դարձած են անոր ենթակայ, տուած են թագ եւ զայն դարձուցած մենատէր:

Զօրաւոր մենատէրերը իրենց իշխանութիւնը ժառանգ թողած են իրենց զաւակներուն, որոնք միշտ չէ որ այդ ժառանգին արժանի դարձած են՝ ըլլալով տկար նկարագրի անձեր:

Ահա թէ ինչու միշտ չէ, որ աթոռակալը արժանի կը դառնայ իր գրաւած իշխանական աթոռին:

Երկա՞ր ժամանակ մարդկութիւնը թագադրեալ մենատէրերու կողմէ իշխուելով՝ կը հաւատար, որ անոնք Աստուծոյ ներկայացուցիչներն էին երկրի վրայ: Այդ ժամանակներուն, կղերական աւագանին, թագադրեալներու հետ գործակցելով, մոլորեցուցած էր հասարակութիւնը՝ հաւատացնելով, որ Տիրոջ կամ քին տնօրինութեամբ հաստատուած իշխանութիւններու դէմ ապստամբիլը մեղք է, եւ թէ մենատէրին ենթարկուելով՝ պէտք է լուռ ու մունջ աղօթել՝ արքայութեան մէջ աւելի լաւ կեանքի մը արժանանալու համար:

Ժողովրդավարութիւնը տապալեց այդ բիրտ մենատիրութիւնները եւ ժամանակները փոխուեցան՝ դէպի աւելի հաւասարակշռուած ու ժի տիրապետութիւն եւ իշխանաւորը քուէով ընտրելու հասկացութիւն: Մնացին սակայն անցեալի սովորութիւններուն ու բարքերուն կառչած մարդիկ, որոնք թագադրեալի շուքին տակ ապրելու կեանքով գոհացան: Զարգացած երկիրներու մէջ թագադիրը դարձաւ ազգային զարդ (decor) անցեալէն մնացած, իսկ յետամնաց երկիրներու մէջ՝ թաւալող ժամանակին դէմ կանգնած դառն ու դժբախտ իրականութիւն:

Եւ որովհետեւ բոլոր ժամանակներուն ալ մարդ արարածի նկարագրին մէջ գոյութիւն ունի աւելի ուժեղին ենթարկուելու եւ անոր առջեւ քծնելով ապրելու տկարութիւնը, հասարակութեան քուէներով ընտրեալ ներկայացուցիչն ալ դարձաւ տեսակ մը մենատէր՝ բազմած տկարներու ուսերուն վրայ: Այս անգամ, ընտրեալ մենատէրը իր շուրջ հաւաքելով ինկարկողներու եւ պնակալէջ հետեւորդներու խումբ մը՝ ամրապնդեց իր դիրքը՝ յաւակնելով ըլլալ անփոխարինելի առաջնորդը իր ազգային միութեան, կազմակերպութեան, եկեղեցիին ու ժողովուրդին: Այսպիսի միահեծան «անփոխարինելի իշխանաւորներ» գոյութիւն ունին

մեր կեանքին մէջ, որոնք բարձր աթոռներու վրայ նստած՝ պաշտօններ կը շնորհեն իրենց հետեւորդներուն, զանոնք նշանակելով հաւատարիմ գործակատարներ մեր ազգային ու հանրային կեանքին մէջ: «Անփոխարինելի» չ'անդրադառնար, որ բնութեան օրէնքը կը պահանջէ, որ հինին տեղ նորը ծնի եւ ժամանակի սլաքը թաւալի՝ ետին ձգելով հինը:

Բնութեան մէջ այն ինչ որ շարժական չէ՝ հոտ կը հանէ իր շուրջը, եւ բոլորս ալ «եհոտը ելաւ» կ'ըսենք մէկու մը, երբ յամառի մնալ՝ անհանգստացնելով իր շուրջինները: Իսկ եթէ այդ անձը դիրք մը կամ տիրոջ մը ունի, իր զգուշի եւ նեղացուցիչ յամառ ներկայութենէն կը հեռանանք եւ մտովին ալ յաճախ կ'ըսենք՝ «թքեր եմ դիրքիդ ալ, տիրոջիդ ալ վրան»:

Հանրային կամ ընկերային կեանքի մէջ պաշտօններու կամ դիրքերու կառչած «հոտը ելած» մարդիկ կը նմանին սպառումի թուականը (expiry date) անցած տուփեղէններու կամ դեղերու, որոնք վաճառատան մը կամ դեղարանի մը դարակներէն կամ պահարաններէն վերցուելով՝ պէտք է նորերով փոխարինուին:


ժպտադէմ», Լեւոն Լարենց, «Ալ ամէն բան ջնջած եմ. / Միայն ժպիտ մը պահած եմ, /Այս գունաթափ շրթունքներուս», Մատթէոս Զարիֆեան, «Առջի օր չարածնի աղջկան մը ամօթխած եւ թաքուն ժպիտը նշմարեցի... ո՞վ էր այդ Օրիորդը», Տիգրան Չէօկիւրեան, «Երբ ժպտիս լուռ այսպէս՝ / Սիրունիկ, գեղատես... / Երբ ժպտիս չքնաղ, գի՛րդ, / Ներսս ամբողջ կը գարթնու / Տեղանք սիրելու», «Մէկդի թողած եմ ժպիտ, խաղ ու պարեր, /Նորընծայ եմ գարափարի աշխարհին», «Զգտայ ժպիտ մը՝ ուր / Չխառնուին արցունք լալիւն», «Տե՛ս, աստղերու ժպիտներ եւ հուր վարդեր անթառամ / Կը տեղամ», Դանիէլ Վարուժան, «Ցանկայարոյց ու միամիտ / Բոյրի մը պէս տարտամօրէն / Հոգիիս մէջ կ'իջնես նորէն, / Ո՞վ կանացի միսթիք ժպիտ», Ռուբէն Սեւակ, «Յոյսին: Ո՛րչափ ժպիտ պիտի ծաղկի, հրեշտակօրէ՛ն, ո՛րչափ ժպիտ մեր աչքերուն մէջ», Սիւսաննա: Ապա եկաւ Գրիգոր Զոհրապը, ֆրանսերէնի փոխարէն գերմաներէնը պաշտպանեց հայկական վարժարաններէն ներս. «Լեռնցի եւ ասիական ժողովուրդ մըն ենք: Կը կարծեմ որ գերմանացուց ծանրութիւնը ու անժպիտ դէմքը աւելի կը պատշաճի մեզի», ապա, նամակ մը ուղղեց Փիէր Քիլյեսաոին, Pro Armenia պարբերականի գլխաւոր խմբագրին, «Ո՞վ ես դուն, օտարական, որ քու գուարթ եւ երջանիկ հայրենիքը մոռնալով, բոլոր գուրթ եւ խանդաղատանքը նուիրեցիր սուգի եւ կսկիծի հողին՝ որ Հայաստան կը կոչուի: Ինչպէ՞ս մեր անժպիտ ու թախծոտ երեսը քու ուշադրութիւնդ հրաւիրեց»: Ապա, գիշեր էր, յանկարծ, բոլոր ժպիտները խամբեցան, մայրենի մեղեդիները դարձան՝ անժպիտ, դառնաժպիտ, տխրաժպիտ,

Շար.ը էջ 15

Հայկեան Արտաքինով Մեր Մարզանքի Ուսուցիչ Հրաչ Մանուկեանի Յիշատակին

ԴՈՎՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

Կիլիկեան Տաւրոսի մաքրամաքուր աղբիւրներէն յորդացած Սիհուն գետի ափին գտնուող Ատանա քաղաքէն էին Հրաչ Մանուկեանի ծնողները: Ան Կիլիկեան Տաւրոսի բարի հսկաներու արտաքին մը ունէր՝ պարթեալահասակ, հայկեան դիւցազնի մը տեսքով եւ դիմագիծով: Ան հպարտութիւնն էր Լիբանանի ՀԵԸ-ի պատգեթպոլի խումբին՝ նախ մարզիկ, ապա մարզիչ: Լիբանանեան մարզական ակումբները հազարներ պիտի տալին այսպիսի մարզիկ մը ունենալու համար իրենց խումբերէն ներս:

ՀԲԸՄիութեան Մեյլգոնեան Կրթական Հաստատութեան (ՄԿՀ) մարզական գուռային մէջ ծներ էր ան, հոն թրծուեր էր որպէս հայ, մարդ եւ մարզիկ, ապա, անմիջապէս Պէյրութ վերադառնալէ ետք արժանաբար ընտրուեր էր ՀԲԸՄիութեան հռչակուած Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանի մարզանքի ուսուցիչ եւ մարզիչ:

Պատգեթպոլը իր տարերքն էր, ՀԲԸՄ-ՀԵԸ-ը՝ իր տունը:

1959-ին առանձնաշնորհումը կունենայի յաճախելու Յովակիմեան-Մանուկեան վարժարանը, ուր կ'իշխէին կարգ ու կանոն եւ տնօրէն Պրն. Արա Թօփճեանի կարգապա-



հական բարձր չափանիշերը: Մարզանքը ետ պէտք չէ մնար, այլ պէտք է բարձրացնէր վարժարանի պատիւն ու վարկը:

Մարզանքի պահերը կը բաղկանային զանազան մարզաձեւերէ՝ շուէտական մարզանքներ, վազք, պատգեթպոլ, վոլիպոլ: Եւ այս բոլորը յաջողութեամբ կը ղեկավարէր մեր երիտասարդ, Սթիվ Ռիվզը (Steve Reeves) յիշեցնող Պրն. Հրաչը՝ նուազ մկանուտ արտաքինով:

Պատգեթպոլի միջ-ակումբային եւ լիբանանեան մրցումները մեր՝ աշակերտներու տարերքն էին.

պատուի հարց կար՝ հայու, ՀԵԸ-ականի եւ Յովակիմեանցիի պատիւն էր խնդրոյ առարկան: «Չենք հարդուրժի պարտութիւնն էր մեր նշանաբանը: Ի՛նչ խանդավառութեամբ եւ «կեցցէ՛»ներով կը հեռանայինք դաշտերէն: Յաղթե՛ր էինք, «պարսիկը փախե՛ր էր»: Օրե՛ր, օրեր ցնծութեան եւ ինքնութեան հաստատման:

ՀԲԸՄ-ՀԵԸ-ի կազմակերպած բարձր մակարդակի Նաւասարդեան խաղերը մեզի համար Ողիմպիական խաղերու չափ կարեւոր էին, իսկ երբ այդ մասին տեղական օտարագիր մամուլը կը բարեհաճէր ժլատ տողեր նուիրել Լիբանանեան եւ ինչու չէ նաեւ Միջին-արեւելեան մակարդակի մեր խաղերուն, հպարտութենէն սիրտերնիս կ'ուռէր, իսկ եթէ պատահէր որ մէկ քանի նկարներ ալ գետեղէին, ապա անոնցմէ մէկուն մէջ կ'երեւար կատարեալ ցատքով մը Պրն. Հրաչը, որ գնդակը կը գետեղէր կողովին մէջ՝ շրջապատուած վարդգէս Պալեանով եւ Ստեփան Գասապեանով:

Տարիները անցան եւ այդ սերունդի աշակերտներէն շատեր վերադարձան ՀԲԸՄիութեան, ծառայեցին որպէս անդամ, վարչական, արի-արեւոյշ, մարզիկ, ուսուցիչ, հասարակական գործիչ եւ յաջող գործարար: Ես եղայ այդ սերունդին քիչերէն մէկը, որ նուիրուեցաւ մանկավարժութեան՝ նախ ՀԲԸՄիութեան Մեյլգոնեան Կրթ. Հաստատութեան, ապա Քալիֆորն-

իոյ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանէն ներս: Իմ պաշտօնավարութեանս ընթացքին մեր ուսուցիչներէն շատեր «ընկերացան» որպէս տիպար դաստիարակ, ուսուցիչ եւ հայրենասէր անձնաւորութիւններ: Անոնց մեծ մասը գրեթէ լոյսերու մէջ կը հանգչի այժմ՝ ամէն մէկը իր լուսաճաճանչ գահին բազմած: Անոնց յոյլին միացաւ նաեւ Պրն. Հրաչ Մանուկեան: Տարիներ ետք ան եղաւ նաեւ մեր հոգաբարձուն ՄԿՀ-ի մէջ: Ան իր ծառայութեան ընթացքին իր նպաստը բերաւ որպէս հայ ուսուցիչին պաշտպան եւ անոր սատար կեցող առանցքային անձ մը: Կարճ ատեն ետք մենք իր մէջ տեսանք մեր ցաւերը հասկցող ու պաշտպանը:

Կեանքը լի է անակնկալներով: Ինծի համար այդ հաճելի անակնկալներէն մէկն էր այն պարագան, երբ ես եղայ իմ ուսուցիչներէս ոմանց գաւակներուն ուսուցիչը: Անոնցմէ էին Պրն. Հրաչի շնորհալի եւ յառաջադէմ դուստրը Թամարը եւ մանչը՝ հօրը հասակով Ալեքը, որոնք կազմեցին իրենց ընտանեկան բոլորը:

Պրն. Հրաչ Մանուկեանի կեանքին նոր գեղեցկութիւն մը հաղորդեցին իր գաւակները՝ կարծես թէ անելի երիտասարդացաւ ան, բայց անակնկալ ու դժբախտ մահը կնոջ՝ Շաքէին, տակն ու վրայ ըրաւ իր սիրտն ու հոգին: Յուզումով լեցուեցան իր օրերը, բայց ան բար-

Շար.ը էջ 15

Պատրիարքներու Վախճանման 30-Ամեակ (1990-2020)

S.S. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Երկրորդ Այցելութիւնը Երուսաղէմ Եղիշէ եւ Շնորհք Պատրիարքներու Հաղիպուն 1975

«Եղբայրական քերմ սիրով կ'ողջունեն Կ. Պոլսոյ հայոց Շնորհք Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայութեան կը հաւաստեն որ վերացան Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ պատրիարքական Աթոռներու միջեւ ժամանակավրէպ դիւրիմացութիւնները: Իր արցունքին մէջ մեր ժողովուրդը կտոր մը ժպիտ թող ունենայ ի տես մեր այսօրուայ եղբայրական միասնութեան»

ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԵՐՏԵՐԵԱՆ

«Ձգացական եւ անձնական պատճառներով պիտի վարանքի ընդունելու Երուսաղէմի Պատրիարքին հրաւերը, սակայն անոնցմէ աւելի լուրջ ու զօրաւոր կը նկատեն այն միւս խորհուրդները որոնք թելադրեցին ընդառաջելու եղբայրական հրաւերին, պարտական զգալով յարգելու Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան ամբողջութիւնը»

ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱՆՈՒՍԵԱՆ

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Երկու Պատրիարքներու Հանդիպումը

Ներկայ տարուոյ Փետրուար եւ Մարտ ամիսներուն աննկատ չենք ուզեր թողուլ Երուսաղէմի Եղիշէ Տէրտէրեան եւ Կ. Պոլսոյ Շնորհք Գալուստեան Ամենապատիւ Պատրիարքներու միաժամանակ վախճանումը որ պատահեցաւ 1990 թուի այդ օրերուն: Անոնց յիշատակը կը կցենք Երջան. Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին 1975 թուին Երուսաղէմ երկրորդ այցելութեանը երբ Հայրապետը բացումը պիտի կատարէր Երուսաղէմի Պատրիարքութեան նորաչին ժառանգաւորաց եւ Ընծայարանի շէնքին՝ նուիրուած ազգային բարերար Ալեք եւ Մարի Մանուկեաններու կողմէ:

Այսուհանդերձ վերելի հաստատումները, առաջինը բունագոսիկ եւ երկրորդը բնական եւ կանոնական, կուզան վեր յիշեցնելու 1967 թուականին սկսեալ անպատուաբեր դիրքաւորումը Երուսաղէմի պատրիարքին՝ հանդէպ Կ. Պոլսոյ պատրիարքին, երբ անխրակերպով առաջինը կ'ամբաստանէր Շնորհք Պատրիարքը, տաս տարիներ առաջ իբր թէ, որպէս Երուսաղէմի 23 թանկարժէք ձեռագիրներու գողութիւնը կատարողն ու Լոնտոն փոխադրողը աճուրդի հանուելու համար, երբ ան Լուսարարապետն էր Ս. Յակոբեանց Պատրիարքութեան:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ներկայութիւնը

Ատենին Վազգէն Ա. Հայրապետ խստիւ դատապարտած էր Երուսաղէմի պատրիարքն ու վերին մարմինը կատարուած գայթակղութեան համար եւ յանձնախումբի մը միջոցաւ իսկոյն փրկագին վճարել տալով փրկած էր ձեռագիրները ստոյգ կորուստէ: Այժմ, 1975 թուին, երկու պատրիարքները առաջին անգամ ըլլալով միասին կը դիմաւորէին Հայոց Հայրապետը յայտնի չղարձանելով անցեակի սրտցաւութիւնը եւ հաշտութեան գետին մը ստեղծել կը ջանային: Այսքանը ըսելու կարիքը զգացի դարձեալ շնորհիւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին որուն այցելութիւնը երկուքին յարաբերութիւնը «եղբայրական» դարձուց:

Ամենայն Հայոց Հայրապետը իր տասներորդ հովուապետական այցելութեան կը ձեռնարկէր 1975-ի ամրան, անցնելով Անգլիայէն ու Ֆրանսայէն, հասնելով Երուսաղէմ Յորդանանի մայրաքաղաք Ամմանի վրայով: Այցելութեան գլխաւոր պատեհութիւնը ինչպէս ըսուեցաւ

Կ. Պոլսոյ Հայոց Ամեն. Շնորհք Պատրիարքի կողմէ: Ապա «Հրաշափառ»ով մուտք կը գործէր Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար:

Երուսաղէմի պատրիարքին յատուկ հրաւերով Շնորհք պատրիարք Գալուստեան տաս տարուան բացակայութենէ ետք առաջին անգամ ըլլալով Երուսաղէմ ժամանած էր Յունիս 20-ին Պոլսահայ ուխտաւորներու հետ միասին Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունելու համար: Այդ առիթով Երուսաղէմ ժամանած էին բարերարներ Ալեք եւ

նոր շէնքի կառուցումին, որով մենք պարգապէս հետեւեցանք մեր սուրբ եւ օրհնեալ նախահայրերու ճամբուն», յիշելէ ետք իր նախապէս բերած նպատար Ս. Յարութեան Տաճարի վերանորոգութեանց:

Հրաժեշտ ի Պատիւ Հայոց Հայրապետին

Նոյն երեկոյեան նորաչին Ընծայարանի սեղանատան մէջ ճաշկերոյթ տրուեցաւ ի պատիւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, եւ հիւրընկալ Եղիշէ Պատրիարքը առաջին խօսքը առնելով



Երուսաղէմի Եղիշէ Տէրտէրեան, Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Կ. Պոլսոյ Շնորհք Գալուստեան

նորակառուց ժառանգաւորաց եւ Ընծայարանի բացումը պիտի ըլլար բարերարներու ներկայութեամբ, ինչպէս նաեւ Սուրբ Յարութեան Տաճարի ներքին հայկական խորաններուն օծումը: Հայրապետի շքախումբին մաս կը կազմէին Կոմիտաս Տէր Ստեփանեան եւ Սերովբէ Մանուկեան արքեպիսկոպոսները, որոնց միացան նաեւ Սիոն արքեպիսկոպոս Մանուկեան եւ Ամերիկայի գոյգ առաջնորդ Սրբազանները՝ Թորգոմ Մանուկեան եւ Վաչէ Յովսէփեան արքեպիսկոպոսները:

Հայրապետը Ամմանի Պալատին Մէջ

Ամմանի օգակայան դիմաւորութեան եկած էր Երուսաղէմի միաբանութիւնը գլխաւորութեամբ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի, իր կողքին՝ Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեան եւ բազմաթիւ հայորդիներ Հաշիմական թագաւորութենէն, Հայկապէն ու Պարսկաստանէն, ուրիշ թագաւորական ինքնաշարժով եւ պատուոյ պահակազուրգի առաջնորդութեամբ Հայոց Հայրապետը առաջնորդութեան պանդոկ: Յունիս 21-ին Վազգէն Ա. Հայրապետ թագաւորական պալատ պաշտօնական այցելութիւն մը տալով կ'ընդունուէր Նորին Վեհափառութիւն Հիւսէյին Բ. Թագաւորին կողմէ, որուն Հայոց Հայրապետը կը շնորհէր Հայ Եկեղեցւոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի բարձրագոյն շքանշանը:

Նոյն օր հայ համայնքի հոգեւոր հովիւ Անուշաւան Վրդ. Ձղջանեանի գլխաւորութեամբ Հայրապետն ու շքախումբի անդամներն ու հաւատացեալները Ամմանի Ս. Թաղէոս Եկեղեցւոյ մէջ մասնակից կը դառնային Հոգեգալստեան Կիրակիի պաշտամունքին ուր Հայոց Հայրապետը կուտար իր պատգամը: Նոյն օր ինքնաշարժներով բոլորը կը ժամանէին Երուսաղէմ, եւ Դաւիթի Դրան մօտ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կ'ողջունուէր

Մարի Մանուկեաններ, Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Առաջնորդ Տիրայր Արքեպս. Մարտիկեան, եւ Լոնտոնէն Պսակ Արքեպս. Թումաթեան: Երուսաղէմ մուտքին Ամենայն Հայոց Կաթողիկոսին ժամանումը ողջունեց քաղաքապետ Թետի Գոլլէք, երբ եկեղեցականաց թափօրը կ'առաջնորդէր Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար «Հրաշափառ»ի երգակցութեամբ: Հայրապետը Ս. Գրիգորի մատրան առջեւ կը կատարէր իր ժամանումի ուխտը:

Ողջոյնի Սաղթանքներ

Իր ողջոյնի խօսքերով նախ Եղիշէ Պատրիարք կ'ըսէր «խոնարհաբար կեցած Ձերդ Վեհափառութեան առջեւ կը լսենք Մարգարէին սրտառուչ ձայնը, «ո՞վ է սա որ դիմեալ գայ յեղովմայ, գեղեցիկ պատմութեանաւ եւ բուռն գործութեամբ»: Գեղեցիկ է Հայոց Կաթողիկոսին պատմութեանը «որովհետեւ Դուք արքան էք մեր սիրտերուն, աւերներէ վերա- կանգնող նորափետուր Հայրենիքի կողքին»: Վազգէն Հայրապետ կուտար իր պատգամը յայտնելով իր ուրախութիւնը թէ իր կողքին էին հայոց գոյգ պատրիարքները՝ Եղիշէ եւ Շնորհք, իր այս երկրորդ Երուսաղէմ այցելութեան առիթով:

Բարերարները Երուսաղէմ ժամանած

1975 տարուոյ Յունիս 23-ին Եղիշէ Պատրիարքի հրաւերով Երուսաղէմ հասան Ալեք եւ Մարի Մանուկեան բարերարները, եւ 25-ի չորեքշաբթի օր կատարուեցաւ բացումը նորաչին ընծայարանին, նախագահութեամբ Վազգէն Ա. Հայրապետին եւ ձեռամբ Ալեք Մանուկեանի, ի ներկայութեան Եղիշէ եւ Շնորհք Պատրիարքներուն: Հիմնարկէքը կատարուած էր չորս տարի առաջ բարերարներու մեծագումար 450,000 տողարի իշխանական յատկացումով: Այն ատեն Ալեք Մանուկեան ըսեր էր «եւ այժմ կարգն էր ժառանգաւորաց

կ'ըսէր, «ազգային հպարտութեան անմոռանալի օրեր եղան Վեհափառի այցելութիւնը, ո՛չ թէ հայկական շաքար մը, այլ հայկական դար մը, որովհետեւ Հայոց Հայրապետը բերաւ դար մը մտածում, դար մը ապրում, դար մը զգացում»: Ապա «եղբայրական ջերմ սիրով» կ'ողջունէր Կ. Պոլսոյ հայոց Շնորհք Պատրիարք Գալուստեանի ներկայութիւնը, շեշտելով որ Հայրապետին Երուսաղէմ ներկայութեամբ «վերացան Երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքական աթոռներու միջեւ ժամանակավրէպ դիւրիմացութիւնները»:

Եղիշէ Պատրիարք աւելին կ'ուզէր ըսել իր այդ մի քանի բառերով եւ այնուհանդերձ անկեղծ պիտի ըլլային Եղիշէ Պատրիարքին քաղցր ու զգացական բառերը պաշտօնական այդ բացառիկ առիթով եւ ի ներկայութեան Հոգեւոր Պետին: Իր կարգին Շնորհք Պատրիարք յանուն «գերագոյն նպատակին» որ էր պարտական զգալով յարգելու Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան ամբողջութիւնը, «Մենք ողջագործուեցանք Երուսաղէմի ամենապատիւ Պատրիարքին հետ մեր առաջին հանդիպումին»: Շնորհք Պատրիարք իր խնդակցութիւնը կը յայտնէր բարերար Տիրար Ալեք եւ Տիկիւն Մարի Մանուկեաններուն իրենց անզուգական մեծագործութեան համար:

Սեղանի շուրջ վերջին խօսքը կ'ըլլար Ամենայն Հայոց Կաթողիկոսը Տ.Տ. Վազգէն Ա. որ «մխիթարուած կը զգար տեսնելով Մեր երկու սրբազան պատրիարք եղբայրներու ողջագործումը» գոր կը նկատէր «Հայոց Հայրապետին համար մեծագոյն նուէրը»: Յիշուի Վեհափառ հայրապետը իր մտքէն շատ բան կ'անցընէր երբ անցեակի տիւր եւ անհաշտ դէպքերը միշտ Մայր Աթոռ իր սեղանին կը հասնէին որպէս գերագոյն պետը Հայ Եկեղեցւոյ կարենալ տալու համար

Օգնիր Մեզ...

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ապրիլ ամիսն էր, Յեղասպանության օրը, 1915-1918 թվականներին թողնելով քնած վիճակում? սուս ու փուս տնից բակ մտալ, որոշել էի նախաճաշի համար թարմ մատնաքաշ (բառբառի) հաց գնել: Դնչապալը (դիմակ) դէմքիս հագցրած պսակաժահր ախտավարակից պատասպարուելու համար փողոց ելալ, երկինքը կապարաթոյր միատարր ամպով էր պատել, նոյնն էր նաեւ իմ հոգեվիճակը այդ ժահրի պատճառով: Արդէն շուրջ երեք ամիս էր, աշխարհը տազնապի մէջ էր գտնուում, ճգնաժամ էր սպրդում: Չինաստանից դուրս էր սպրդել այդ եւ երկրից-երկիր աւերներ գործում:

Ապրում էինք Սանթանո քաղաքում, հացթուղի շուրջ երեք մղոն մեր տնից հեռաւորութեան վրայ էր գտնուում դէպի արեւմուտք Ֆուլթոն պողոտայի վրայ, ուր քայլելով պիտի գնայի: Երկարաձիգ մեր փողոցում անդորր էր տիրում, հագուադէպ ինքնաշարժի երթ, իսկ դուշերը ազատ վայելում էին իրենց թռիչքներով ու կռկռոցներով, ինչ լաւ է թուշոց կեանքը ոչ մտածմունք ունեն ոչ մտահոգութիւն: Օրը կիրակի էր, մարդիկ փակուած էին իրենց տներում, ոչ թէ կիրակի հանգստի օր լինելու համար, այլ գրեթէ շաբաթուայ լրիւ օրերը ինքնամեկուսացում եւ սահմանափակ երթեւեկութիւն էր, քանի որ ամբողջ Լոս Անջելէս գաւառում էլ մտաւորապէս պարէտային վիճակ էր տիրում, հրահանգուած էր մասնաւորի մեծահասակներին փակուել տներում, միայն կարճաժամկետում որոշները կարող էին դիմակով առաւօտեան դուրս գալ գնումներ անելու համար, առանց դիմակի տեսնողը տուգանուելու էր: Մննդի առեւտրակենտրոններում շարքեր էին գոյանում, մարդիկ վախվիւթով էին քայլեր վերցնում, յանկարծ չդիպչէին իրար կամ շատ մօտենան: Ճամբիս հատ ու կենսա դիմակաւորուած մարդիկ մօտիցս անցնում էին լուռ ու մունջ եւ ուշադիր:

Արդէն տասնհինգ տարի է սպրդում եմ Լոս Անջելէսում, այս տարիների ընթացքում մարտ ամսի վերջերից սկսած օդերը տաքանում էին, այնպէս որ գովամղիչի անհրաժեշտութիւն էր զգացում, սակայն այս տարի հակառակն է? ցուրտ-անձրեւ եւ տաքուկ հագուստի կարիք: Տաք օրեր են ցանկալի նկատելով ինչպէս ասում է, թէ? ժահրը մասամբ անկարողանում է վարակել: Իսկապէս ինչ տազնապալի ժամանակների հանդիպեցինք, նախկինում, իմ ողջ կեանքում այսպիսի մեկուսացման եւ դիմակակրման օրեր չպատահեցին եւ ով գիտէ որքան է տեւելու այս նեղացուցիչ վիճակը:

«Կիլիկիա» հացթուխ-անուշարանում միակ յաճախորդն էի կանուխ եկած լինելով, դրամարկղի մօտ մէկը չկար, փոքրածաւալ խանութում քով-քովի դրուած սառնարանների մէջ ցուցադրուում էին զանազան տեսակի թխուածքներ քաղցրասիրահարի խորթակ գրգռող, եկել էի միայն հաց գնելու, խանութի ներսի դռնից հացթխանոցն էր երեւում, ուր կանայք եւ տղամարդիկ գործով էին զբաղուած, ով գիտէ ինչ

կանուխ ժամի էին եկել աշխատանքի, որ հացը արդէն պատրաստ էր, թոնիրի մէջ չի եփուում հացը, փուռեր եւ օջախներ, թոնիրի մէջ թխուած լաւաշը այլ հոտ ու բոյր ունի: Այս հացթուխների մեծամասն աշխատաւորները մեր հայաստանցի քոյր ու եղբայրներ են, հայրենիքից արտագաղթելով աշխատանքի են լծուած իրենց գոյութիւնը պահպանելու եւ նաեւ օգնելու իրենց հարազատներին Հայաստանում:

Կանգնած տեղիցս կանչ տուի. -Քուր ջան. շնորհ կը բերէ՞ք:

Այս մէկը ինձ ծանօթ չէր, միջահասակ մի հայ տիկին.

-Ի՞նչ կը ցանկանաք:

-Երեք մատնաքաշ, որ ասեմ մէջտեղից կիսէք, կը լինի՞.

-Ինչու չէ, հիմա կը պատրաստեմ:

Նա համեստ ու քաղաքավարի պատուէրս առնելով մտաւ հացթխանոց:

Մենակ եմ խանութում ցուցափեղկերին եմ նայում, մէկէն ուշադրութիւնս գրաւեց դիմացի պատի վրայ փակցուած պայտը, անմիջապէս յիշեցի անցեալում այստեղ հացի եկած ժամանակս նկատել էի այդ պայտը եւ հետաքրքրութեան համար հարց էի տուել աշխատաւոր կնոջ.

-Քուր ջան սա ինչ նշան է պատին փակցուած:

Նա շրջուելով դէպի պատը պատասխանեց.

-Սա նալ է կոչուում, չարը (սատանայի մուտքը) խափանելու համար է:

Վրդովեցայ ոչ հայերէն բառ լսելով եւ անմիջապէս ուղղեցի բարձրաձայն ասելով.

-Քուր ջան, սրան պայտ են կոչում, անունը պայտ է, ձիերի, ջորիների եւ էշերի սմբակների են ամրացնում, ախր ինչու մեր ոսկեղնիկ լեզուն աղաւաղում ենք, էլ ուսերէն, պարսկերէն եւ այլն խառնում մեր լեզուի հետ սարքում ենք շիլաշիթ (խառնաշիթ), էլ չեմ խօսում փողոցներում խօսող ժառանգորդ տեսակը, աղբիւրը իր պարզ ու յստակ ջուրով է ախորժեղի: Այդ նկատողութիւնից յետոյ իրեն պատմեցի թէ Իրանում եւս ի մասնաւորի գիւղերում մուտքի դռան վերելում ամրացնում են այդ պայտը չարքերից եւ դեւերից պաշտպանուելու համար, ժողովրդական հաւատալիք անապաշտութիւն պէտք է համարել:

Գործաւորի ձայնը սթափեցրեց ինձ մտքերից:

-Ահա աղբէր ջան հացերը:

-Կարելի է խնդրեմ մի երեք կապոց էլ լաւաշ տաք:

Դրամը վճարելով, երկու տոպրակներով դուրս եկայ, ուրախ էի նախաճաշի համար թարմ հաց էի տանում տնեցիների համար: Երկինքը դեռ մնում էր ամպամած եւ ցուրտ, կամաց քայլերով դէպի տուն ճամբայ ընկայ մայթի կողմից, ճամբան քիչ աշխուժացել էր: Պողոտան կտրելով փողոցից շարունակեցի դէպի տուն, երկու փողոցների կտրուածքին տեսայ մի մարդ միայն կարճ տաքատը հագին, տան առջեւը մայթին կանգնած, մէջքը դէպի իմ կողմը, գլուխն ու աջ ձեռքը դէպի երկինք պարզած բարձրածայն կանչում է՝. - Տէ՛ր Աստուած, մեզ օգնիր բորոնս վիրուսից (My God, help us from corona-virus): Ես մայթին կանգնած հետաքրքր-

րութիւնից մղուած տեսարանն էի դիտում, մի տարեց կին դնչակալը երեսին ջղայնացած կանչում էր՝. - ա՛յ տղայ, հագուստդ հագի՛ր, չմըսես՛, եկեղեցի կ'երթանք, կ'աղօթենք (Hey body. Wear your clothes, so you don't get cold. Let's go to church and and pray): Չիմացայ նրանք ինչ ազգի էին, ինձ հասկանալի անգլերէնով կը խօսէին, Լոս Անջելէսը խայտաբղետ ազգերի խառնուրդ քաղաք է: Նրանց այդ վիճակում թողած ճամբաս շարունակեցի մտքերով տարուած՝ ախր Աստուած մարդուն խելք, գիտակցութիւն է տուել ճիշտ ձեւով տնօրինի իր կեանքը, բնութիւնը չաղտոտի, ջուրը, գետերը, ծովերը, ովկեանները եւ միջավայրը չապականի, շրջապատը մաքուր պահի, մարդկային յարաբերութիւնները չվտանգի, խաղաղ ու շրջահայեաց կեանք ապրի: Ով գիտէ բնութեան աղտոտութեան հետեւա՛նք է այս ժահրի տարածումը, թէ՛ աղէտաբեր գաղտնի արարք... ապագան կ'ապացուցի:

Քիչ քայլելուց յետոյ հանդիպեցի Սիմոն ընկերոջս, նա դիմակը երեսին բարիլոյտով սկսեցինք մեր զրոյցը առանց ձեռնուելու եւ անձերի հեռաւորութիւնը յարգելով:

-Հա սիմոն, այս ժամին ի՞նչ ես անում փողոցում.

-Քանի երթեւեկութիւնը քիչ է, դուրս եմ եկել քայլելու, միթէ կարելի է գիշեր-ցերեկ տունը բանտարկուած մնալ այս հրէշ վիրուսի պատճառով, ձանձրանում եմ, Աստուած չանի այս վիճակը երկար տեւի, ընկճուածութիւն եւ այլ անպատեհութիւններ առաջ կը բերի:

-Յոյսով այդպէս որ դու ես ասում չի լինի, ճիշտ է դաժան եւ վտանգաւոր մի համաճարակ է սա, սակայն աշխարհի կառավարութիւնները զօրահավաքի են ենթարկել իրենց պայքարի միջոցները նրա տարածման առաջը խափանելու համար:

-Ինչքան միամիտ ես դու, այս խմորը շատ ջուր կը խմի, գերմեծերի քաղաքականութիւնն է սա, աշխարհի կարգ ու սարքը փոխելու նպատակներ է հետապնդուում, վայն եկել է թերաճ երկրներին. նրանց դէպի սնանկութեան եւ առաւել կախուածութեան են տանելու:

-Իմ խեղճ էլ չի կտրում, որ էսքան շուտ վերջ գտնի, այս քանի ժամանակում մեր առօրեայ կենցաղը ամբողջովին փոխուել է:

Մեր նիստ ու կացը, վարք ու բարքը, հարազատական, բարեկամական եւ ընկերային շփումներն ու յարաբերութիւնները կասեցուել են, էլ չեմ խօսում մշակութային ձեռնարկների եւ ճամբորդութիւնների մասին:

-Դեռ ուր ես, եթէ այսպէս առաջ գնանք սոցիալական կեանքը չեղաշրջուելու է: Մի քանի ամիսներ առաջ մի յարգելի անձի մահուան առիթով ինչ յարգանքով ու պատուով հոծ յուզարկաւորների մասնակցութեամբ ննջեցեալը հողին էր յանձնուում մահախօսական ելոյթներով եւ դրուատանքի արտայայտութիւններով, սակայն այս օրերին թոյլ չի տրուում հինգ-վեց հոգուց աւելին նեկայ գտնուելու թաղման արարողութեան: Մէկ կեանք մարդը համալսարանի դասախօս է եղել, սերունդ է դաստիարակել, ուսում եւ գիտութիւն է փոխանցել, հապճեպ գերեզմանատուն են տանում եւ անշուք թաղում կատարում մի հինգ հոգով:

-Իմ կարծիքով մարդկանց հաւաքականութիւններից զրկելու միտում կայ, մոռացնել տալ անցեալի սովորութիւնները, իրենց թխած նորագոյն քաղաքական ու մշակութային կեանքով ապրելու համար:

-Ինչ անենք, մկրատն ու կտորը գերմեծերի ձեռքումն է, ինչպէս ուզում են, այնպէս էլ կը ձեւեն:

-Արդարեւ հնարաւոր չի այսպէս բանտարկուած ապրել, միթէ կարելի է առանց հանդէսի, հարսանիքի, խրախճանքի ապրել, կարօտախտով պիտի տառապենք:

-Լաւ, ընկեր ջան, լաւ որ քեզ հանդիպեցի, չկիսուելու պատճառով խօսքերը կուտակուել դարձել էին մաղձ, բացուելով թեթեւացայ, դեհ գնանք, յուսով շուտով հանդիպենք:

Տուն հասնելով տնեցիները արթանցել էին, աղջիկս ինձ տեսնելով հարց տուեց.

-Պա՛պ որտեղ էին գնացել:

-Նախաճաշի համար թարմ հաց առնելու:

-Միթէ քեզանից չեմ խնդրել, բոլորովին դուրս չերթաս, մարդկանց հետ չչփուես, էս վիրուսը (մանրէ-ախտ) շատ վտանգաւոր է, եթէ բռնուեցիր ծանր է լինելու, էլ չկրկնուի, հիմա հագուստներդ փոխիր, թող լուացուեն, ինքք էլ բաղնիք առ, յետոյ արի նախաճաշենք:

Ինչ արած, պէտք է լսել, ենթարկուել, մանաւանդ որ աղջիկս հիւանդանոցի դեղատան պատասխանատուներին է:



ՍԴՀԿ-ի
Խորհրդատուական Գրասենեակ
(888) 908-1887
contactus@aebu.org

ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարչական Մարմինի Գաղտնիութեան Կարգապահական Միութեան (ԳԿԲՄ) եւ Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) կը յայտարարէ որ «քորոնա» ժահրի ստեղծած տագնապալի վիճակին բերումով կեանքի կոչած ենք յատուկ գրասենեակ մը:

Սոյն գրասենեակը խորհրդատուական ծառայութիւններ պիտի տրամադրէ պետական եւ այլ նպատակներէն օգտուելու կարելիութիւններուն մասին, որպէսզի Հայ քաղաքացիները կարողանան որոշ չափով յարթախարի տնտեսական դժուարութիւնները:

Խորհրդատուութեան եւ օժանդակութեան համար կարելի է դիմել
հեռաձայնելով հետեւեալ թիւին. 888-908-1887
Կամ. contactus@aebu.org

«Քաջ Վկան»

«Երբ քեզ կը տեսնեմ երես առ երես
Լեցուր ինձ հոգով, Լեցուր ինձ ով Տէր
Որ քո քաջ Վկան միշտ լինեմ եւ ես»,
Արաքսիա ճեպեճեան

ԴՈԿՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

Հայ ժողովուրդի պատմութեան մէջ անպակաս չեն նուիրեալներ: Անոնք, որոնք իրենց համակ կեանքը նուիրեցին հայ ժողովուրդին եւ որ նաեւ նոյն այս կեանքերը հասցուցին ֆիզիքական նահատակութեան: Այս շեշտուած ձեռով՝ Յեղասպանութեան օրերուն եւ անկէ ետք ալ: Եւ այս առանց բացառութեան՝ այր թէ կին: Անոնք իրենց հաւատքը եւ անոր վկայութիւնը վերածեցին ապրող իրականութեան եւ այդ վկայութիւնը հասցուցին մինչեւ ֆիզիքական նահատակութեան:

Բայց նահատակութիւնը չի վերջանար ու չի կենար ֆիզիքական մահով, որովհետեւ կայ անոր հոգին եւ այդ հոգին կազմաւորող հաւատքը, որ ապրող իրականութեան կը վերածուի: Անոնք՝ նահատակները, իրենց հաւատքը եւ հաւատքի կեանքը հասցուցին ամէնէն բարձր համոզմունքին: Համոզմունք մը, որ անսակարկելի է եւ մանաւանդ կատարեալ: Եւ այնքան բարձր ու կատարեալ, որ իրենց հաւատամքը հասցուցին մինչեւ ֆիզիքական նահատակութեանը՝ իրենց հաւատքի ինքնութեանը համար: Անոնք մեռան, որպէսզի ապրի ժողովուրդը: Ապահովուի հայուն եւ անոր պատմութեան շարունակականութիւնը: Անոնք դարձան ՔԱՋ ՎԿԱՆԵՐԸ իրենց հաւատքին ու համոզմունքին:

Արաքսիա ճեպեճեանի կեանքը կը պատկանի այն նուիրեալներուն, որոնց համար հաւատքը եւ անոր համար նահատակութիւնը ապրեցուց հայ ժողովուրդը: Արաքսիա ճեպեճեանի հաւատքը իր ամբողջ կեանքն էր եւ որ ինչպէս ինք պիտի որակէր. «Տէր, քեզ եմ տալիս իմ կեանքը, իմ շունչը»: Արաքսիա՝ իր կեանքը տալով Տիրոջ, չվախեցաւ ծառայել հայուն եւ զնաց մինչեւ նահատակութիւն. «էլ չեմ վախենում դժոխքի ահից»:

Արաքսիա ճեպեճեան՝ քաջ վկան այս նուիրական հաւատքին:

Արաքսիա կեանքը սկսած է Այնթապէն, իր ծննդեան թուականը երեւի 1880 տարիներուն: Նախնական ուսումը ստացած է ազգային Հայկանուշեան վարժարանին մէջ, որմէ ետք Այնթապի Ամերիկեան Աղջկանց վարժարանին մէջ, որուն շարունակութիւնը ներկայ օրերու Հալէպի Գոլէճն է, Հալէպ, Սուրիա: Ապա կ'ուսանի Մարաշի Աղջկանց Գոլէճին մէջ: Աւարտելէ ետք, կը նուիրուի ուսուցչութեան առաքելութեան: Արաքսիա՝ ուսումնաստեան էր իտասարդուհին, 1911թ. կը մեկնի Անգլիա եւ կը հետեւի Ուոուտպորտ Գոլէճի դասընթացներուն: Բայց արեւմուտքի հմայքը Արաքսիայի համար նախապատուութիւն չէր եղած: Անոր համար իր հայ ժողովուրդի ծառայութիւնը առաջնահերթ էր: Կը վերադառնայ եւ դարձեալ կը նուիրուի ուսուցչական պաշտօնին: Վրայ կուգայ մեծ պատերազմը եւ արհաւիրքի օրերը: Արաքսիան եւ իր ընտանիքը կ'աքսորուին Տէր Զօր, ինչպէս ամբողջ հայութիւնը: Եւ տարագրութեան ընթացքին կար հմայիչ առաջարկը Արաքսիային,



որ իր կեանքը կրնար փոխել: Վերջապէս Արաքսիա ծանօթ դաստիարակ եւ կրթական մշակ էր: Հռոմի Պապին տեղակալը կ'առաջարկէ անոր, որ դաւանափոխ ըլլայ եւ իր տան մէջ պաշտպանուի եւ հոգ տանի իր գաւազներուն կրթութեան: Իսկ Արաքսիայ կեցուածքը: Ան նախապատիւ համարեց իր հայ ժողովուրդին հետ ըլլալը եւ անոնց համար ապրիլ՝ նոյնիսկ երբ այդ ապրելուն մէջ կար տառապանք:

Տէր Զօրը Արաքսիայի համար կը դառնայ ծառայութեան մեծ դաշտ: Ան տարագիր ու տառապող հայուն նպաստ կը բաժնէ, հիւանդները կը խնամէ, անոնց վէրքերը կը դարմանէ եւ Յիսուս Քրիստոսի յոյսի եւ սիրոյ կեանքը կը քարոզէ: Արաքսիա այսպէս կը գրէ իր նամակագրութիւններուն մէջ՝ ուղղուած եւրոպական միսիոնարական ու բարեսիրական կազմակերպութիւններուն. «Ոչ մէկս գիտեմք, թէ ե՞րբ եւ ո՞ւր երթալու ենք: Հայ բնակչութեան չքաւորութիւնն ու ողորմելիութիւնը աննկարագրելի է»:

Արաքսիա ձեռնածալ չմնաց այս «աննկարագրելի» իրողութիւններուն դիմաց. «Ամէն օր կ'երթանք ետ գնելու ծախուած երեք չորս աղջիկե, կըսէ ան: Ու տակաւին կը փորձէ բաժնել հաց եւ կերակուր՝ այն, որ ինք չունէր, բայց կը ճառէր: Երբ անօթի հայ կնոջ մը մէկ հնչուն ոսկի կուտայ, կինը լալով կ'ըսէ. «Եթէ քիչ մը աւելի կանուխ հասնէիր, երեխաս կեանքէ հեռացած պիտի չըլլար»: Բայց Արաքսիա որո՞ւն հասնէր որ հասնէր:

Արաքսիա ապրեցաւ Եփրատ գետին եւ անոր մահուան ճիրանները. «Կին մը ինքզինք Եփրատին մէջ նետեց տեսնելէ ետք թէ իր հարազատը անօթի մեռաւ: Հայր մըն ալ նոյնը ըրաւ»: Արաքսիա կ'այցելէր ու մօտէն կը փորձէր ծանօթանալ իւրաքանչիւր հայ ընտանիքի: Անոր սիրտը այդքան «կապուած է տառապեալներուն», որ իր կեանքը կը վտանգէր՝ փրկելու համար անոնցմէ ոմանք:

Արաքսիա ապրեցաւ իր ժողովուրդին «տարագրութեան ճանապարհին ամէնօրեայ խազանարումը եւ ծեծը»: Ու տակաւին «հալածանքը եւ ճնշումը»: Եւ կար Արաքսիայի խորհուրդը. «Ո՞վ պիտի կարենայ վերացնել այս անողորմ պայմանները»: Արաքսիա տուաւ իր խորհուրդին նոյնինքն իր պատասխանը: Ինքը՝ Արաքսիան: Արաքսիան, որ կառչած էր

հաւատքին եւ չէր գլանար քաջաբար վկայել. «որ քաջ վկան միշտ լինեմ եւ ես»:

Արաքսիայի մարդասիրական եւ ազգասիրական ծառայութիւնը եւ իր անդուլ հեւքը հասնելու համար իր հայ ժողովուրդին կարիքներուն, կառավարութեան մասնաւոր ուշադրութեան եւ հետապնդումի առարկայ դարձաւ: Արաքսիա կը ձեռքաւորուի եւ կը բանտարկուի Տէր Զօրի մէջ, ուր կ'ենթարկուի տաժանելի չարչարանքներու: Ան կը նահատակուի Տէր Զօրի բանտին մէջ 1916թ.:

Արաքսիան իր հաւատքի համոզմունքը հասցուց կատարելիութեան, որ զինք տարաւ նահատակութեան: Իր կարճ կեանքը աշխարհի վրայ եղաւ այս հաւատքի կեանքին քաջ վկայութիւնը՝

Գու՛ն տանու ես ինձ դէպի հայրենիք,
Եւ երբ յոգնած եմ՝ տալիս ես թարմ ոյժ.

Եւ դու լեցնում ես ամէն իմ կարիք,

Որ քեզ ծառայեմ կայտառ ու աշխուժ:

Արաքսիայի ծառայութիւնը եղաւ կայտառ ու աշխուժ: Ան չյոգնեցաւ տգնել եւ աղերսել իր ժողովուրդին կարիքներուն: Իր միջազգային բոլոր կապերը օգտագործելով, ան չյոգնեցաւ գրել. «Տէր Զօրը պէտք ունի օգնութեան»: Ան փորձեց կարելի սահմաններուն մէջ օգնութիւն հասցնել տարագրեալ իր ազգակիցներուն:



ըուն:

Արաքսիան հարազատերէն նկարագրեց իր ժողովուրդին ապրած արհաւիրքը եւ իր փորձառութիւնը Տէր Զօրի մէջ. «Ես որեւէ կերպ չեմ չափազանցեր»: Որովհետեւ այդ բոլորը ապրուած փորձառութիւն էր: Այդ ապրուած փոր-

ձառութիւնը իրն էր եւ իր այդքան սիրած հայ ժողովուրդին տառապանքներն էին, որոնք տարին զինք մինչեւ նահատակութիւն: Այս ալ Արաքսիային եւ անոր հաւատքին քաջ վկայութիւնն էր:

Արաքսիայի նահատակութեանն անմիջապէս ետք եւ որպէս յարգանք անոր կեանքին ու վկայութեան, Անգլիոյ Ուոուտպորտ Գոլէճի սրահին մէջ տեղադրուեցաւ յուշատախտակ մը, որ մինչեւ այսօր կը մնայ հոն:

Անգլիոյ յուշատախտակին հետ այսօր Յեղասպանութեան հարիւր եւ հիգներորդ ամեակին առթիւ, թող որ այս տողերը ըլլան փոքր յարգանքի գիր Արաքսիային՝ եթէ մէկ կողմէ իմ ընտանիքիս հարազատին բայց նաեւ հայ ժողովուրդին հարազատ մէկ այլ նուիրեալ անդամին: Այն նուիրեալ անդամը, որ ապրեցաւ իր հաւատքին շնորհած կեանքը եւ այդ ալ քաջ վկայութեամբ: Վկայութիւնը իր դէմքին, որուն վրայ սրբութեան ճառագայթներ կ'արտացոլար եւ անոր ձայնին մէջ Յիսուս Քրիստոսի ձայնը կը լսուէր:

Եւ դէմքը ու ձայնը ան միացուց իր ապրող կեանքին: Կեանք մը, որ եղաւ ապրող քաջ վկայութիւն մը: Վկայութիւնը Աստուծոյ եւ հայ ժողովուրդին: Արաքսիայի նահատակութիւնը, եթէ այսօր տակաւին կ'ապրի, քանի կայ այդ նոյն կեանքին հաւատքը ու անոր քաջ վկայութիւնը: Եւ այս վկայութիւնը կ'ապրի այսօր:

Նման հաւատքի կեանքերն են, որոնք ապրեցուցին հայ ժողովուրդը եւ պիտի շարունակեն ապրեցնել: Կեանք-կեանքեր, որոնց պիտակը հաւատքն է եւ անոր քաջ վկայութիւնը:

Արաքսիա ճեպեճեանի հաւատքի կեանքին քաջ վկայութիւնը: Բայց նաեւ իմ եւ իւրաքանչիւր հայունը: Եւ հայը պարտի այս հաւատքի կեանքին քաջ վկայները ըլլալ, որպէսզի հայուն կեանքը եւ անոր պատմութիւնը շարունակուին:

Հայուն հաւատքի կեանքը եւ անոր համար ապրող հայ քաջ վկայները: Արաքսիան եւ իր նմանները մնացին քաջ վկայներ: Մենք ալ պարտինք մնալ:

Քաջ վկայները:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

Ցաւակցական

Շողիկ Մանկրեանի վաղահաս մահուան տխուր առիթով Տոբթ. եւ Տիկին Արշակ եւ Վարդուհի Գազանձեան իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն, յատկապէս ամուսնոյն՝ Կիւրեղ Մանկրեանին եւ դստեր՝ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Նանոր Հէլվաճեաններուն եւ մերձաւորներուն:

Առ այդ, փոխան ծաղկեպսակի, 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

Ցաւակցական

Շողիկ Մանկրեանի անակնկալ եւ վաղահաս մահուան տխուր առիթով, Տէր եւ Տիկին Տիրան եւ Մարգրիտ ձէրէճեան կը յայտնեն իրենց խորին ցաւակցութիւնները եւ վշտակցութիւնները հանգուցեալի ամուսնոյն՝ Կիւրեղ Մանկրեանին եւ դստեր՝ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Նանոր Հէլվաճեաններուն եւ համայն հարազատներուն:

Առ այդ, փոխան ծաղկեպսակի, կը նուիրեն 200 տոլար «Մասիս»ի ֆոնտին:

ԺՊԻՏ Հայու Դառնացած Ծիծաղը

Շարունակուած էջ 11-էն

տրտմած պիտ եւ թախծած պիտ:

Սիրելի ընթերցող, դուք կարծեցի՞ք, թէ հայը նախ ստուար բառարաններ կապեց, բարդ գզգզումներու բարդ բառերով ողորուած, ապա սկսաւ մտածել եւ ապրիլ... Յիշեցնենք վահէին եւ Ծիծեռնակաբերդը այսօր այցելող բոլոր հայորդիներուն, թէ մենք ենք մեր բառերը, ու անոնք մեր անցեալի ականատեսներն են, սպիները երբեմն: Իսկ այժմ, արտօնեցէք այսօր երկու նոր բառ եւս առաջարկեմ - «սեւած պիտ» եւ «ժահրած պիտ», քանզի մեր գեղապաշտ գրիչները իրենց վերջին մղձաւանջի մէջ հարկադրուեցան տեսնել այդպիսի դէմքեր, Չապէլ Եսայեանի խօսքով՝ «Մեր թրքահայ մտաւորականները, գրեթէ առանց բացառութեան, ամենէն փայլուն ներկայացուցիչներէն սկսելով մինչեւ ամենէն խոնարհները՝ մեծ հոգեկան արիւթիւնով դիմագրաւեցին թշնամիին հալածանքներուն: Ես տեսայ մարդիկ որ ստոյգ եւ քստմունքի մահուան մը կը դիմէին ժպտադէմ ու անշիջանելի յոյսի հրաշքը աչքերու մէջ», Կովկասահայ գրական երեկոյ: Կը նստինք հանրաշարժ: Պա-

տուհանէն կը յայտնուի հայրենի բնակարաններ: Յոյսը այժմ մեզի կը թելադրէ երգել ժպտով: Կը մտաբերեմ մեղեդիներ, որոնք 50ական թուականներուն ձայնասփիւռի ունկնդիրներուն ոգեւորութիւն կու տար. «Զարթնել ես, Արարատ, ժպտ կայ դէմքիդ», «Լուռ կը նայեն ինձ աչքերդ ժպտուն, / Իմ լաւ, իմ մաքուր, իմ անոյշ երազ», «Իրար նայէինք անոյշ կարօտով. / Քնքոյշ ժպտայինք յանկարծ իրարու», «Մեր երկրի սրտումը, / ժպտավառ եւ տաք է», «Իմ երկրի վրայ շողում է / Սարը Արարատ, / Եւ խաղողը, մեր ժպտում է / Քաղցր ոսկեհատ»: Իսկ հանրաշարժի ձայնասփիւռէն, շնորհակալութիւն վարորդ Արտուշին, մեղմ կը հնչէ մէկ այլ երգ, «Բարի արագիլ», ու ժպտ կը ցանէ վահէի եւ իր դասընկերներու շրթներուն, - դուք որոշեցէք, թէ ի՞նչ տեսակ ժպտ էր ան. գեղեցի՞կ, գունաւոր, բարի, թէ՞ քաղցր:

Իմ բալիկների աստղերն են շողում Յոյսով անթառամ, վարդերով վառման, Վշտերս դառան ժպտներ շողում, ժպտներ, ժպտներ շողում:

Պատրիարքներու Վախճանման 30-Ամեակ

Շարունակուած էջ 12-էն

իր յորդորն ու վճիռը: Այդ օր Երուսաղէմի մէջ յիւրաւի կը հանգստանար Վեհափառ Հայրապետին միտքը թէ դրական ուղղութեամբ կ'ընթանային Երուսաղէմն ու Կ. Պոլիսը:

Վերադարձ Մայր Աթոռ Տ.Տ. Վազգէն Ա. Հայրապետ Ս. Յակոբեանց վանքի Չեռագրա-

տան այցելութիւն մը կուտար Յունիս 30-ին ու կը դիմաւորուէր բազմավաստակ ձեռագրագէտ Նորայր Արքեպիսկոպոս Պողարեանի կողմէ, որ տարիներու իր տքնաշան աշխատանքով ցուցակագրեր էր եւ հրատարակել մինչ այդ 2365 ձեռագիր մատեաններ: Վեհափառ Հայրապետը յաջորդ օր Ամմանի եւ Փարիզի վրայով կը վերադառնար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Հայկեան Արտաքինով Սեր Մարզանքի

Շարունակուած էջ 11-էն

կութեամբ չնայեցաւ կեանքին՝ գաւազները կային հոս, ովկիանոսի այս ափին, պէտք էր անոնց մօտ ըլլալ եւ օրերը լեցնել անոնց ներկայութեամբ ու յաջողութիւններով:

ԱՄՆ-ի այս ափերուն ան ունեցաւ երկու տուն՝ գաւազներուն տունն ու ՀԲԸՄիութեան կեդրոնը: Ոչ մէկ ձեռնարկ կը փախցնէր եւ առաջին եկողներէն մէկը կ'ըլլար: Առիթով մը ելոյթ պիտի ունենայի Կլէնտելի Քաղաքային գրադարանին մէջ. կազմակերպիչները մեծ թիւով հանդիսականներ կը սպասէին նկատի առնելով օրուան առիթը: Օր մը առաջ Պրն. Հրաչ հեռաձայնեց ըսելու համար թէ ցաւով այս անգամ պիտի չկրնայ ներկայ գտնուիլ: Հանգստացուցի գինք եւ խնդրեցի որ իր առողջութեան հետեւի: Յաջորդ օրը երեկոյեան ան եղաւ առաջին ներկայացուցիչներէն մէկը՝ քանի մը բարեկամներ ալ հետը բերելով:

- Պրն. Գոճայեան,- ըսաւ ինծի,- չդիմացայ, ըսի որ միշտ ներկայ գտնուած եմ քու բոլոր ելոյթներուդ, այս մէկուն ալ կ'ուզեմ ներկայ ըլլալ:

Տակաւին շատ թարմ է իմ վերջին հանդիպումս 2020-ի Յուն-

ուարին, Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու բակին մէջ՝ Մեղրեան բարերար եղբայրներու աւանդական հոգեհանգստեան առթիւ: Այդ օրերուն մտահոգութիւններէս մէկն էր Պրն. Հրաչի առողջական վիճակը, որովհետեւ շատոնց լուր չունէի իրմէ: Ուրախութեամբ թօթուցի ձեռքը եւ ուրախութիւնս յայտնեցի գինք այսպէս առոյգ տեսնելուս համար:

- Պրն. Մինաս, ես եւ մեր ընկերներն ալ քեզմով մտահոգուած էինք եւ յաճախ կը հեռաձայնէինք տիկնոջը, ուրախացանք որ ամէն ինչ յաջող անցեր է: Ես բնաւ չեմ փախցներ Մեղրեան Բարերար եղբայրներու հոգեհանգիստն ու ոգեկոչման նուիրուած հոգեճաշը:

Սիրելի ուսուցիչ, գալիք տարի այլեւս քեզ ալ պիտի չտեսնանք անմահ Բարերարներու տօնին, բայց պիտի յիշենք քեզ հոգեհանգստեան արարողութեան ընթացքին: Ափսո՞ս, հազար ափսոս, որ համաշխարհային այս վարակին պատճառով չկրցանք աշակերտներով, բարեկամներով, միութենականներով եւ կուսակցական ընկերներով յաւուր պատշաճի տալ մեր վերջին հրաժեշտը:

Խոնկ ու աղօթք քու յիշատակիդ:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



- Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝
- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր


Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԷ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahian

2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
 Tel: (626) 797-7680
 Massis2@earthlink.net

